



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material



4463

83  
U - 33

PK 27.





ԵՐԱԿԱՆ

Վ. Ի. Պ. Ք.

— — —

ԵՐԵՒԵՄՆՅԱ ՀԵՄԵՐ.



ՄՈՍԿՎԱ

83

1859

Մ-33

Տեսաց 10-րդ համար

~~7687~~

1000000

1000000

1000000 1000000



1000000

1000000

ԱՐԵՍՈՒԹ

ՊԵՏՎԻՎԱՆ Ա. Լ. Պ

208

J.S. 09-2013

4463



864

42.

83

Ա-33

28 JUN 2005

ՄԱՍՆԻԿԻ

այ-

2 NOV 2005

ՊԵՏՐԵՎԻ Վ. Ե. Գ.

ԹԱՐԴԱՐԱՆԵՑ

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՐԱՀԱՐԱՆԻ ՈՒՍՏՈՂ

ԳԱԲՐԻԵԼ ՀԵԶՈՒԹԵԱՆՑ

— Ա Հ Յ Ո Ւ Թ —

ՄՈՍԿՎԱ

Ի ՑՈՒՑԻՆԻ ԼԱԶՐԻ ՀԱՅՐԱԿԱՆԻ

ԳՈՐԾՎԱԿԱՆ ՎԱՐԴԱՐԱՆԻ ՄԱԿԱՐԱՆ

ՀԱՅ Ա. ԲԱԲԱՆԻ

4859

1192

1193

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

съ тѣмъ, чтобы по отпечатаніи было пред-  
ставлено въ Цензурный Комитетъ узаконен-  
ное число экземпляровъ. С.-Петербургъ, 31  
Марта, 1859 года.

Цензоръ В. Бекетовъ.

Ե ՞ Ն Շ Ա Կ

ԱԶԳԱՍՏԻՐԱԿԱՆ ԵՊԱՆԴՈՅՆ


Պ. ՅԱՎՀԵԱՆԻԿՈՒԹ

ԿԱՌԱՎԱՐՏԱՎԵԼՈՅ

ԱԳՈՒԼԵՑՏՈՅ

ՆԱԽԵՐԱԿՈՒՄԵ

ԹԱՐԴԱՐԱԿՈՒՄ :



# Ա Յ Ե Տ Ե Ւ Ի

1.

Օ Տ Տ Ո Յ Ա Ր Ա Ր Ա Ր :

\*

Ա յ շ հ ա ր ի ո ր տ ա ր ի ա ռ ա ջ , Շ լ -  
վ ա ր ց վ ա յ լ դ լ ե ր ա ն տ ա խ ա ր ա կ ի վ ե -  
ր ա յ մ է կ ի ն ա մ բ ա յ կ ա ր , ո ր ե ր ե -  
ւ ե լ ի ա ղ ն ո ւ ա կ ա ն ա յ ց ց ե ղ ի ը ն ա կ ա -  
ր ա ն է ր : Ա յ ր ո ց ը ս լ ա ս ա ծ է ր չ ո ր ս  
կ ո ղ մ ի ց ա ն տ ա ռ ո վ , ո ր ն ո ր ք ա մ ա -  
կ ի ց ը ա ր ձ ր ա ն ո ւ մ է ր Շ վ ա ր ց վ ա յ լ դ  
լ ե ր ա ն վ ե ր ա յ : Ա յ ս ա ն տ ա ռ ը , ի ւ ը  
ք ա ր ձ ր ու խ ի տ ծ ա ռ ե ր ու տ ա լ , շ ա տ

կենդանեաց տւելէր ապահովութեան տեղ, ու, կարծես թէ, նուրանց տւելէր իւր հովանաւորութեան տակը. Երան ծայրին՝ արծիւն էր շինել իւր բունը, փոքրինչ ցած՝ ցինն (коршунъ) էր կերակրում իւր ձագերին, իսկ ստորոտի (подножье) վերայ՝ արիւնծըծօղ կենդանիքը. գայլերն, արջերն, վարազներն.... մէկ մէկու հետ սլատերազմ էին անում: Ամրոցի առաջը, հեռու, վովումէր կանաչագոյն գեղեցիկ դաշտ, գոյնզգոյն ծաղկներով զարդարած. այնտեղ թռչոտումէին մեղրածանձներն ու սիրուն թիթեռները (սկապե-

լակ): Դաշտի մէջ տեղովը վազու-  
մէին երկու առուներ (րսչեակъ),  
որոնց ափերի սօսիները, իւրեանց  
բաղմաթերթ տերեներով, խեղձ  
հովիւներուն, այն արեի տաքու-  
թիւնից՝ պաշտպանումէին: Առու-  
ները թափվումէին հեռու տեղ ե-  
րեռող լիճը: Մէկ խօսքով տարւայ  
տաք եղանակներին այստեղ արքա-  
յութիւն էր:

Տափի վերայ ցրուած էին հողա-  
գործաց խրձիթները, որոնք եր-  
ջանիկ ապրումէին ամրոցի տիրոջ  
հովանաւորութեան տակ: Սա էր  
բարեսիրու ու մեծահոգի ձիաւորն՝  
կոմս Բիչարդը:

Կոմալ թէպէտ սկառե ըազմական  
քաջութեանց մէջ առաջի մարդն  
էր, բայց որովհետեւ առողջութիւ-  
նը չէր ներում նորան միշտ զի-  
նուոր մնալու, կոմսուհի Խիլդե-  
գարդի հետ պսակվեցաւ։ Երկար  
ժամանակից յետոյ նորա ունեցան  
մէկ աղջիկ՝ Վայլըուրդ անունով,  
մէկ էլ տղայ՝ Օտո անունով։  
Քանի որդիքը մեծանումէին,  
զարգանումէին, այնիքան հայրն ու  
մայրը դարձնումէին իւրեանցուշը  
ու միտքը աւելի և աւելի դէպ ՚ի  
սիրելի զաւակաց կրթութիւնը։  
Կոմսն աշխատումէր, որ նորանց  
մորի ընդունակութիւնները բայց

անէ, սլարզացնէ և այս նովատա-  
կով լաւ լաւ օրեւըը տանումէր նո-  
րանց ման ածելու։ Տանումէր նո-  
րանց քանի կարելի էր բարձր  
տեղ, նստումէր նորանց հետ ինչ-  
պէս երեխայ, խաղումէր՝ ինչպէս  
երեխայև միևնոյն ժամանակ մտա-  
ծելով նորանց հետ, ցոյց էր տա-  
լի Այ ամենակարող զօրութիւ-  
նը, որն որ բնութեան մէջ փայ-  
լումէ։ Ցոյց էր տալի Աստուծոյ բա-  
րութիւնը, նորա կամքը և մար-  
դուսպարտաւորութիւնները։ Կոմ-  
սուհին էլ իւր կողմից աշխատու-  
մէր վառել նորանց քնքուշ սրտի  
մէջ սէր դէու ՚ի բարին, դէու ՚ի  
առարինութիւնը։

Դեռ այսքան ուշադրութիւնը  
փոքր համարելով՝ նոքա խնդրեցին  
իւրեանց պատուելի արբատից (մօ-  
նախ' ), որ Վայլը ուղիղ և օտոքի  
կրթութիւնը յանձն առնել։ Բիշար-  
դըն իւր որդիքները ներկայացնե-  
լու ժամանակ առեց արբատին։

— Ամենայարգելի հայր, ահա իմ  
զաւակներս. աշխատեցէք այնպիս-  
սի կրթութիւն տալ սորանց, որ  
ծերութեան օրերիս ուրախացնեն  
ինձ։ Չո՞ղ օգտաւետ դիտութիւն-  
ներով էլ պարապեն, բայց ամե-  
նահարկաւորն ու ամենացանկալին  
այն է, որ առաքինի քրիստոնեայք  
դառնան։ Առվորցը եք որ հաւատի

օրէնքները, հաւատի պատուի-  
բանքները դժուար լուծ չեն մեզ  
համար. այլ մեր՝ թէ մամաւոր,  
թէ հոգևոր երջանկուե՛ աղբեկո-  
ներեն: Թռող սորանէ թէ հնաղանդ-  
վեն պատուիրանիքներին, այլ սի-  
րեն նորանց, պաշտեն: Առարինու-  
թիւնը, բարեգործութիւնը ամէն  
մի քայլի մէջ աչքի առաջեւ ունե-  
նան:

Պատուելի աբբատը քանի կա-  
րող էր աշխատումէր կոմսի խըն-  
դիրը կատարել: Օրէօր երեխանց  
սրտի մէջ աղղումէր սէր դէսլ ՚ի  
հաւատը: Բարեգործ հայրը աշ-  
խատումէր գլխաւորապէս զգու-

շացնել Օտտօին այն փորձանքներից, որոնք աշխարհիսերեսին կարող են հանդիպել։ Քանի քանի անգամ պատահումէր, որ աշակերտը վարժապետի հետ ծառի տակը նստած խօսումէին, մտածումէին մարդուս վիճակին վերայ։

— Աիրելի օտտօ, ասումէք արբատը։ Երբ մարդս աշխարհի կենցաղաւորութեան մէջ մտնումէ, այսինքն սկսումէ մարդկանց հետ ասլրել, շուտ շուտ փորձանքներ են սկատում նորան։ Պարզ ու հանգարտ սիրտը սկսումէ վրդովվիլ։ Վիրքերն էլ սկսումեն նորա միտքը ու սիրտը պղտորել և նորանովեր-

բԵմն բոլորովին ապականել ու  
կորցնել նորան։ Կեանքը՝ դժուար  
Ճանասպարհ է, որի վերայ մարդ  
մեծ զգուշութեամբ պէտք է անց-  
նէ։ Կեանքի հետ կապուած են ցա-  
ւերն ու նեղութիւնները, պէտք է  
նորանց հետ սպառերազմել, յաղ-  
թել, որ երկնքից թագ ստանայ.  
Առանց սպառերազմի ինչու կո-  
րող է յաղթութիւն լինի։ Մէկ էլ  
որ ժամանակի ՚ի զուր տեղը չը  
վատնես, ամէն մի ըռալէն քեզ հա-  
մար մի թանդաղին ակ համարես,  
որն որ ձեռիցը թողած ժամանակ  
էլ չես կարող յետ բերել։ Ահա,  
ո՞րդի, քո տարիքները մարդուս

կեանքի գարունն է և որովհետեւ  
մարդուս գարունը միայն մէկ ան-  
գամ է լինում, այս պատճառաւ  
ով այն ժամանակ չէ սերմանել, նա  
ոչինչ չէ կարող հնձել։ Ով որ այս  
գարնան ժամանակ զանազան կրթե-  
րի կամքին կը հետեւ, նա դեռ  
ձմեռը չը հասած՝ աշնան ժամա-  
նակ՝ բոլոր հոգեկան զօրութիւննե-  
րը կը կորցնէ ու չորցած ծառին  
կը նմանի։ Ուրեմն աշխատի՛ր, սի՛-  
րելիս, քանի կարող ես լաւ կեանք  
վարել, կրքերիդ յաղթել ու առա-  
քինութեանց հետեւել։ Մեղքիցը  
հեռացիր, փախիր, ինչպէս մէկ  
թունաւորից օձից։ Նա քեզ թէ-

պէտ ուրախ դէմքով կը երեի,  
բայց նորա շունչը միայն բաւական  
է, որ քեզ թունաւորէ ու սպանէ:  
Այս, ինչպէս երջանիկ է նա, ով  
իւր երիտասարդութիւնը անց է  
կացրել առաքինութեամբ: Փոր-  
ձիր դուէլ, սիրելի օտառ, ինձա-  
նից շնորհակալ կը լինես: — Այս-  
պէս էր ասում վարժապետը:

Իսկ պարագ ժամանակները նա  
երբեմն իւր աշակերտներին կար-  
դայնել էր տալի աւետարան և  
երբեմն հին երևելի հեղինակաց  
բարոյական դրուածներ:

Այսպիսի լաւ կը թութիւնն ՚ի  
հարկ է լաւ պտուղ բերեց: Դեռ



Օտոօն քսան տարեկան չէր, երբ  
իւր մեծ խելքի ու հասկացողու-  
թեան հետ ունէր բարի վարք ու-  
ծնողաց հնազանդութիւն։ Ամէնքը  
սիրում ին նորան ու զարմանում է,  
ին նորա կատարելութեան վերայ։  
Համեստ երիտասարդը ոչ մէկից  
չէր ընդունում գովասանք, որ շատ  
անդամ տալիս էին նորան։ որով-  
հետեւ կարծում էր թէ դեռ ոչինչ  
բանի մէջ գովասանութեան ար-  
ժանի չէ դտնվել։

2.

ՅԱՅՈՂԱԿ ԴԵՊՐ :

Դրացի աղնուականները կոմս  
Ռիչարդին շատ էին սիրում։ «Եռ-  
բանցից միքանիսը մէկ օր ելել էին  
հիւր և կոմսը, ժամանակ անցկաց-  
նելու համար առաջարկել էր որո  
անելու գնալ։

Որսորդութին սկսվեց։ Օտտօն  
նոյնպէս նորանց մասնակից էր,  
բայց յետոյ մէկ ահաղին արջի ե-  
տեից ընկնելով՝ ամենեին հեռա-  
ցել էր որսորդներից։ Զահիլ կոմ-  
սը քշեց արջին մինչև մէկ քա-

բանձաւ որտեղ էլ անասունը թաղ  
կացաւ : Մինչև Օտտօն կանգ.  
նած էր Երկրիտ և մտածումէր,  
արջին սպոռտէ՝ թէ յետ դառ.  
նայ ընկերների մօտ, յանկարծ  
լսեց հեկեկանք ու աղիողորմ ձայ.  
նով կրկնած խօսքերը, «օդնեցէր,  
օդնեցէր»: Չնայելովոր կարող էր  
վտանգի հանդիպել, Օտտօն շու.  
տովվաղեց օդնութեան: Եղենեայ  
(сосновый) ծառի տակը ընկած  
էր մէկ ջահիլ տղայ, սաստիկ վի.  
րաւորված, ու կարծես թէ մահի  
հետ կովումէր: Այն խղճալիի ան.  
յոյս դրութինը վերջին աստիճանի  
շարժեց Օտտօն: Ըուտով նորա

վերբերը կապեց, որ արիւնը կտըր-  
վի և չը մտածելով որսորդութեան  
զուարձութեանց վերայ, առաւ ու-  
սին ու տարաւ հօր ամրոցը։ Այն-  
տեղ շուտով հիւանդի վերայ ըսկ-  
սան հոգս քաշել։ Խղճալին՝ փոքր  
առ փոքր ու շքի դալով, զօրութիւն  
ստացաւ վեհանձն Օտտօի հոգա-  
ցողութեամբ ու շնորհակալեղաւ  
նորանից դեմքով միայն, որովհե-  
տեւ դեռ խօսելու ոյժ չ'ունէր։

Հենց սյս ժամանակ Ռիչարդն  
էլ հիւրերի հետ միասին դարձաւ  
տուն։ Ի՞նչպէս նոքա զարմացան,  
որ Օտտօն հիւանդով էր պարա-  
պած։ ու երբ Ռիչարդն իմացաւ թէ

ինչ է պատահել, իւր որդւոյ այս  
առաքինի գործի վերայ մինչև ան-  
գամ լազը շարժեց։ Այլոցի քա-  
հանան, այն դարու քահանաներու-  
նման, բժշկական արհեստը դիտեր  
և վերբերը տեսնելից յետոյ ասեց  
թէնոքա շատերի կաղալիեն։ Ըսւ-  
սով այնպիսի դեղեր տւեց, որ հե-  
ւանդը խօսելու զօրութիւն ստա-  
ցաւ։ Բիշարդը նստած էր անկողի-  
նի (постель) մօտ, երբ նա սկսեց  
խօսել.

— Ես Ռոբերտ Գրենֆելդի որ-  
դին եմ....

Հենց որ կոմին ոյս խօսքերը լը-  
սեց, հիւանդի ճտովի ընկաւ, նո-

ըա թոյլ ձեռները բռնեց ու կան-  
չեց.

— Դուք Բորելտի որդին էք:  
Ո՞չ, ինչ երջանիկ եմ, որ կարողա-  
ցել եմ իմսիրելի ու սրտակից բա-  
րեկամիս որդուն մասնաւոր օգնու-  
թիւն տալ: Իմ բոլոր կալուածս  
ձերն է, կարող էք տնօրինել, ինչ-  
ով ցանկանաք:

Այս ասելով՝ կոմնը բարեկամա-  
կան կերպով նորա ձեռները սեղ-  
մեց (пожать):

Այս սրտաշարժանի (сце-  
на) ժամանակ ներկայ գտնվողնե-  
րը բոլորը լաց էլան: Հիւանդը՝  
սրտանց ահս քաշելից յետոյ՝ շա-  
րունակեց.

— Քսան տարի է, որ հայրս դնացել է ուրիշ ազնուականների հետ  
Պաղեստինա, ու այն օրից ոչինչ  
Համբաւ (Խաբար) չեմ ստացել։  
Չգիտեմ կենդանի է թէ, մեռած։  
Այս երկար ժամանակեայ բաժան-  
մունքը մօրս համար այնքան դժո-  
ռար էր, որ խեղջը չը դիմացաւ-  
նա էլ մեռաւ։ Ազգականներս տես-  
նելով իմ ջահիլութիւնը ու ան-  
փորձ լինելը, սկսեցին ամէն կող-  
մից յափշտակել (թալնել) ունե-  
ցածս։ Վերջապէս նոքա կամենու-  
մէին ինձ սպանել և ես վախայ,  
բայց ահա չորս օր առաջ, երկու  
աւազակներ պատեցին, ես զէնք

չունենալով յաղթվեցայ ու վիրաւորեցին ինձ։ Գետնի վերայ ընկած, մէկ.քայլ (шагъ) յառաջ գնալու զօրութիւն չունենալով, ես մահի էի պատրաստվում, երբ ջահի կոմսը ինձ ազատեց։

Այս խօսքերն ասելից, ողողի պէս արտասուքը սկսաւ թափվել նորա թշովը։ Փոքր ժամանակ դադարեց, յետոյ հանեց մատիցը մատանին ու շարունակեց։

— Ահա իմ հօր ժառանգութիւնիցը ինչ մնացել ինձ։ Այս մատանին ստացայ իմ հաւատարիմ ծառացից, երբ որ աղջականներիցս փախչումէի։ Աս պատկանումէր

մօրս և սա կը մնայ մօտս, մինչեւ  
կեանքիս վերջին ըոպէն։ Այս....  
.քանի՛ անգամ ես պաշել եմ սո-  
րան, .քանի՛ անգամ սեղմել եմ  
կուրծքիս։ Երբ Աստուած ինձ իւր  
մօտ կը կանչէ.... որն որ կարծեմ  
շուտով կը լինի.... այն ժամանակ,  
ո վեհանձն Օտոո, այն ժամանակ  
առէ՛ք այս մատանին ձեզ մօտ և  
թող սա միտ բերէ ձեզ՝ ձեզ առա-  
.քինի դործը։ Աստուած անէ որ սա  
ձեզբաղդ ու երկնքից օրհնութիւն  
բերէ։

Զահիւ երիտասարդը լոեց, ո-  
րովհետեւ խօսելու զօրութիւն էլ  
չ'ունելը։ Բոլոր մարմնոյ վերայ քըր-

տինք սկսեց գալու շուտով մահ-  
ուան նշաններն երեցան։ Բայց նա  
երջանիկ էր համարում իւրեան,  
որ բարեկամներով էր պատաժ։ «Ես  
խոստովանվեց, հաղորդվեցաւ ու  
միւս առաւօտը, Բիչարդի և Օտ-  
տոի ձեռքերին վախճանեցաւ։

Կոմը վեր առեց ննջեցեալի  
մատանին ու ցուցամատնին (ука-  
зательный цалецъ) դնելով ասեց.

— Ես մինչև մահս այս մատանին  
կ'ունենամ և յոյս ունեմ Աստու-  
ծից, որ քրիստոնէական մահով էլ  
Բիչարդ Գրէնֆելդի որդին մե-  
ռաւ, այն մահով էլ ես մեռնեմ։

3.

ԽԱԶԱԿՐԱՑ ՈՒՂԵՏՈՐՈՒԹԻՒՆԸ :

Երուսաղեմը, որի համար այն-  
քան քրիստոնէից արիւնը թափ-  
վեցաւ, քանի մի անդամ վերա-  
դարձաւ անհաւանելի ձեռքը։  
Աջօրէննէրը 1244 թւին պաղես-  
տինայումը նորանց շատ դժուար  
տեղը գցեցին, և երբ զանդանե-  
րը հասան Եւրոպա, ամէնքը միա-  
կամ ցանկացան օդնել և սկսեցին  
մոտածել թէ արդեօք ի՞նչ հնարի-  
ների դիմեն։

Այն ժամանակ Գաղղիախի մէջ  
թագաւորումէր, իւր բարի վար-  
քով երևելի Կայսրը, Լուդովիկոս  
թա: Նա Երբոր շատ հիւանդ էր  
խոստացաւ որ այն հալածածքը իս-  
տոնեաներին պաշտպանէ ու հի-  
ւանդութիւննեց լաւացաւ թէ չէ,  
յստի քարոզեց խաչակրաց ու-  
ղեորութիւնը: Բոլոր Եւրոպախց  
սկսեցին հաւաքվիլ ցանկացողքը:

Այն խաղաղ ու հանդարտ անա-  
պատի մէջ էլ, ուր կենումէր Ռի-  
չարդը, ուղեորութեան սկսեցին  
սկառաստիլ: Դնքը կոմնը այս  
ընդհանուր ցանկութեամբ շարժ-  
վեց: Իւր կնոջ ու դաւակաց խըն-

Դիրքներին չը նայելով, նա կամեցաւ օդնել, որ անօրէնների ձեռիցը հանենքրիստոսի գերեզմանը, և իւր բարեկամաց, աղջականաց գրկեցը (օբъятіе) բաժանվելով, միաւորվեց ազնուականների հետ, որոնք գնումէին Գաղղիա: Խաչակիբները այս տեղից պէտք է գնացել էին ծովով մինչևի Պաղեստինա, Գաղղիացւոց նաւերի վերայ:

Յագաւորի մօրը, որ Կաստիլիայի Արքայազնուհի էր, մնաց Գաղղիայի կառաւարութիւնը: Բայց Լուղովիկոսի Ռ կինը, Մարգերիտան չը կամեցաւ իւր ամուսից

բաժանվելը։ Զօրքը հաւաքվեց  
Պրովանսի ափերի մօտ ու նաւերը  
նստելով հեռացան Օդոստոսի 15  
1248 ամի։ Հեռանալու ժամանակ  
տաղերը հնչվեցան։ Քամին յա-  
ջողակ էր փչում ու զօրքը յաջո-  
ղութեամբ հասաւ Կիպրոս կղզին,  
ուր Լուդովիկոսը կամենումէր նո-  
րա համար պաշար վեր առնել։  
Այս այստեղ էր որ դիպողական  
հիւանդութիւնը (չումայ) պատա-  
հեցաւ, որով քաջ ասպետներից  
շատերը մեռան։

Այս պատահմունքումը Կայսր  
ցոյց տւեց իւր ազնիւ հոգին։ Ար-  
համարհելով ամենակերպ վտանգ-

ները, հիւանդների ու մեռնողների մօտ էր գնում, տալիս էր նորանց այն դեղերը, որ բժիշկը դրել էր, ով ցաւով էր նեղացած՝ մսիթարումէր, ով փողի էր կարօտ՝ փող էր տալիս։ Աստուած այս բարի Կայսեր վերսոյ Հովանաւորութիւն ունէր. և առողջ էլ մնաց։

Թռող չը երկարացնենք բանը, այս ուղևորութեան վերսոյ խօսելով, միայն առենք, որ Կոմն Ռիչարդը մեծ քաջութեամբ պատերազմումէր անհաւատների հետ։ Բայց դժբաղղաբար, թագաւորը իւր զօրքով ու երկու եղբայրներովը միասին յաղթիւցաւ Մանսուրոյի

մօտ և ընկան բոլորքը դերի։ Մի  
և նոյնն էլ Ռիչարդի հետ սպառա-  
հեցաւ։ Քանի մի ժամանակից յե-  
տոյ Լուդովիկոսը իւր և իւրերու  
գլուխը ազատեց դերութիւնից,  
բայց որովհետեւ կոմսը շատ վիրա-  
ւորած էր՝ ազատութիւն չը տվին  
նորան։ Թռղնենք Ռիչարդին այս-  
տեղ, և տեսնենք թէ նորա ընտա-  
նիքը ինչ է անում Գերմանիայի  
մէջ։

— 33 —

4.

ՈՐԴԻՌՅ ՀԵՌԱՆԱԾԱԼ :

Պաղեստինակի մէջ խաչակրաց  
յաղթվիլը, ողջ Եւրոպակի վերայ  
մեծ տրտմութիւն բերեց։ Բիշար-  
դի կինն էլ իւր դժբաղութիւնը  
հասկացաւ, բայց, Օտտօն աշխա-  
տումէր միսիթարել նորան և ան-  
դադար կրկնումէր թէ, Աստուած  
խեղձերի օգնական է։

— Մայրիկ, ասեց միանդամ ջա-  
հիլ կոմսը, ես իմացայ որ հայրս  
դեռ դերի է . . . Սառակինոսները

շատ աղահ մարդիկներ են և այն  
գերիներին, որոնցից յոյս ունեն  
որ իւրեանց գլուխը թափեն, լաւ  
են պահում, պահպահում։ Կար-  
ծեմ որ դժուար չը լինի հօրս ա-  
զատելը, թէ որ վոքը ինչշատ վող  
ուղարկենք Եգիպտոս։ Պէտք է, բո-  
լոր միջոցները (средства) ՚ի գործ  
դնենք։

— Ճշմարիտ է, որդիս, պատաս-  
խանեց խիլդեգարդա, բայց որտե-  
ղից կարող ենք գտնել այնքան վող,  
որ խեղճ Ռիչարդին թափենք գե-  
րութիւնից։

— Ահա այստեղ մօտիկ հարեան  
ունենք, շատ մեծ հարուստ է, նա

մեղանովառձառ կը տայ հարկաւոր  
եղած վողը, եթէ նորա մօտ գրաւ  
դնենք մեր ամբոցը, որն որ տասն  
անդամ շատ արժէ:

Խիլդեղարդան ամէն բանի էր  
համաձայնում, որովհետև Ռիչար-  
դի վրկութեան վերայ էր խօսվում:

Միւսօր առաւօտ ջահիլ կոմսը  
ձի թամբեց, զնաց ծեր Այլբերիկի  
մօտ ու յայտնեց իւր հարկաւորու-  
թիւնը: Այլբերիկը մէկ ժամանակ  
զինւորական ծառայութե՛ մէջ էր  
եղել ու լաւ կը ճանաչէր Ռիչար-  
դին: Փոքը ինչ մտածելից ասեց:

— Ես շատ ուրախ եմ այդ բանի  
մէջ մասնակցութիւն ունենալ և

պատրաստ եմ ձեզ օդնելու : Դուք  
շատ լաւ դիտաւորութիւն ունեք  
և ոչ ոք չէ ասելու թէ, Այլբերիկը  
հրաժարվեցաւ և օդնութիւն չը  
տվեց որ գերին թափեն : Բայց ես  
վախումեմ որ ուշ մտածած լինիք  
այդ բանի վերայ, ով դիտէ կենդա-  
նի է հիմա ձեր հայրը, թէ մեռած :

— Պէտք է որ կենդանի լինի . այն  
տեղից համբաւ են ինձ բերել, թէ  
հայրս առողջացել է և եթէ մի-  
ջոց ունենար ու կարողանար դլու-  
խը թափել, հայրենիք կը վերա-  
դառնար :

— Թռէ այդպէս է, պէտք է շու-  
տով ճար անել : Քսան ու չորս ժա-

Այս յետոյ դուք ինձնից վողերը  
կը ստանաք :

Օտոօն ծերի սլատասխանովը ա-  
ւական մնաց ու մեծ ուրախութիւն  
տուն դարձաւ, որ սլատմէ մօրը այս  
բանի մասին :

Հետեւեալ օրը Այլբերիկն եկաւ  
Խիլդիդարդի ամրոցը ու վողե-  
րը բերեց : Բարեսիրտ կոմսուհին  
շնորհակալութիւն արեց ծերին այս  
օդնութեան համար և տուեց ձե-  
ռացագիր որ հէնց երբ կարողա-  
նոյ, այն ժամանակ վերադարձնէ  
դումարը :

Հիմա պէտք էր գտնել այնպի-  
սի հաւատարիմ մարդ, որին կա-

րելի լիներ տալ փողերը և ուղարկել Եգիպտոս, որ խօսակից լինի  
Ռիչարդի մասին։ Չդիտեին ում  
յանձնեն այս դժուար բանը, որով  
հետեւ այստեղ հարկաւոր էր ոչ  
միայն հաւատարիմ, այլ և բան  
հասկացող մարդ։ Խիլդեգարդան  
չէր կարողանում այսպէսին ճա-  
րել։ Աերջապէս Օտտօն, տեսնե-  
լով որ դործն յառաջ չէ զնում,  
ասեց մօրը։

— Կսեցէք, եթէ մենք այսպէս  
մարդ գտնելու կը մանգանք, կար-  
ծեմ որ դժուար գտնենք, իսկ այս  
միջոցումը հայրս կարող է մեռ-  
նել գերութեան մէջ։ Հարկաւոր

է շտապել, ամէն ըուղէն թանգ է :  
Ես մէկ մարդ գիտեմ, որն որ ու-  
րախութեամբ կ'երթայ Եղիպտոս,  
միայն՝ եթէ դուք համաձայնվիք :

— Ո՞վ է այդ . անհամբերութք  
հարցրեց կոմսուհին :

— Ես ինքս, պատասխանեց Օտ-  
տօ : Մի՛ մերժէք իմ խնդիրքը,  
մայրիկ : Ես ողջ կեանքովս պար-  
տաւոր եմ հօրք, ինչու այն կեանքը  
չըպէտք է զոհեմ նորա համար :

— Ի՞նչ ես ասում, Օտտօ : Մի՛-  
թէ այդպիսի երկար ճանապար-  
հորդութիւն ես ուզում անել :  
Դեռ հասակդ այնքան չէ որ պա-  
տահած փորձանիքներու դիմանաս :

Այս բանի համար փորձած մարդ  
պէտք է ունենանք, և դու շատ  
ջահիլ ես, սիրելի:

— Բայց որդիական սերը ամենին  
կը յաղթէ. նա ինձ առաջնորդ կը  
լինի, իսկ Աստուած՝ իմ օդնականս,  
սլաշտապանս :

— Ի հարկ է, որդիական սերը  
հրաշքներ է անում. բայց այդ ըլլ-  
դանցմունքը չը պէտք է չափից  
անցիենայ ու յանդգնուի դառնայ :

— Ուտեղ պէտք է պարտաւո-  
րութիւն կատարել, այնտեղ յան-  
դգնութիւն ինչ բան ունէ: Մենք  
ունենք հիմա փող որ հօրը թա-  
փենք, և չենք դանում հաւատա-

բիմ մարդ, որ Եղիպտոս ուղարկենք. Ես, ինչպէս որդի, միթէ սլարտաւորութիւն չունեմ որ իմ հայրը վերադարձնեմ մօրս։

Կոմուհին զարմացած մնաց։ Ո՛չ կարողանում էր համաձայն վիլնորա առաջարկութեան հետ, ոչ թէ չը համաձայն վիլ։ Երկու ջրի մէջ տեղը կանգնած։ Մէկ կողմից նորան քաշում էր իւր սիրելի ամուսնոյ սերը և նորա հետ տեսնվիլը, միւս կողմից վախեցնում էին նորան այն փորձութիւնները, որոնք կարող էին սլատահել որդւոյ հետ։ Երկար ժամանակ չէր գիտում թէ ինչ անէ. վերջապէս որդւոյ ան-

դադար խնդիրքները հարկադրեցին Խիլդեգարդախն, որ բայ թողնէ նորան :

— Ո՞ս, ինչպէս ես բաղդաւոր եմ կանչեց ջահել կոմսը, մօր գիրկըն (գուքը) ընկնելով : Ես կը տեսն ըվեմ իմ սիրելի հօր հետ : Աստուած էլ ինձ կօգնէ : Կը տեսնէք, մայրիկ, թէ ես հօրս հետ միասին չը գամ . մենք էլ երջանիկ կ'ապրենք մշկտեղ : Կերքին ձայնը ինձ ասում է, որ ես կարեմ հսյրս թափել գերութիւնից : Աստուած, դու լինիս իմ պաշտպան :

Խիլդեգարդախ լացն եկաւ, տեսնելով իւր որդւոյ այնքան հաւա-

տարմութիւնն ու սէրբ։ Կա աղա-  
չանքներ էր որ ուղարկումէր դէպ  
՚ի Աստուած, որ Օտտօին օդնու-  
թիւն անէ, նորա վերայ հովանա-  
ւորութիւն ունենայ։ Կոմսուհին  
զանազան խորհուրդներ տուեց,  
հրամայեց որ ամէն օր սուրբ Աս-  
տուածածնին աղօթք անէ ու նորա  
շնորհը կախ արեց տէր ողորմեա։  
Օտտօն սկսեց Ճանապարհի հա-  
մար սլատրաստութիւն տեսնել ու  
առաւօտը վաղ, արեգակն երեցաւ  
թէ չէ, նստեց ձիու վերայ, ու մօ-  
րից օրհնութիւն առնելով, քշեց  
դէպ ՚ի արևելք։

5.

ՆԵՐԳՈՒԹԻՒՆ :

Ճեր Այլբերիկը որ այնպէս շուտով համարեց փողերը, առանց նպատակի չէր. նա կամենումէր որ կոմսուհին մխայնակ մնայ ու իւր չար մորերը հեշտութեամբ կատարէ: Օտոօի հեռանալից երկու շաբաթ անցէր կացել, երբ նա եկաւ ամրոցը ու կամեցաւ Խիլդեգարդաին ներկայանալ: Կոմսուհին ուրախութեամբ ընդունեց նորան, բայց ինչպէս զարմացաւ, երբ այն

ագահ զառամեալ ծերը նորանից  
սկսեց սլահանջել մէկ ուրիշ ձե-  
ռացադիր երկու անդամ աւելի  
դումարով, քան թէ այն փողը՝ որ  
Օտտօն վերառաւ։ Կոմսուհին սկե-  
լացած մնաց։ Ճերն սկսեց առա-  
ւել հրամայական կերպով կրկնել  
իւր աներես, լեռը սլահանջմուն-  
քը։ Բայց Խիլեգարդան ՚ի հարկ  
է մերժեց նորա առաջարկութիւ-  
նը։ Այլբերիկն սկսեց չարանալ,  
ոտները տափիին խփելու անար-  
դական խօսքեր ասել։ Յետոյ, սլա-  
ռուհանից տռած նշանով նորա  
ծառայքը տռն թափեցան, առին  
կոմսուհւոյն և դստերը ու կողալո-

տեցին մութ բանտերի մէջ :

Այս բանը կատարելից յետոյ,  
Այլբերիկը հրամայեց որ Կոմսուհ-  
ւոյ ծառաներին նոյնպէս բանտերը  
դնեն : Ամրոցը շինեց իւր բնակա-  
րան ու ինչպէս տանտէր հրաման-  
ներ հանեց : Իւր օդնականներին  
փող բաժնեց և խիլդեգարդակի  
պաշարներով սկսեց կերակրել նո-  
րանց :

Յետոյ հաւաքեց դատարկապորտ  
մարդիկներ, որոնց տալիս էր ոռ-  
ձիկ և որոնց պարտաւորութիւնն  
էր պաշտպանել ամրոցը թշնամի-  
ներից : Այս նախազգուշութիւնը  
թէպէտ հարկաւոր չէր, որովհե-

աև դրացի ազնուականները գնացել եին սուրբ Երկիրը (Երուսաղէմ). բայց այս չափագործը աչքի առաջև ուներ, որ բան է, Եթէ այսօր է, Եգուց է, Օտոօն վերադառնայ, չը կարողանայ նորա հանդըստութիւնը խանգարել, ամրոցը ձեռից առնել։ Միւս կողմից նա ձայն տարածեց թէ Խիլլեգարդան ու նորա աղջիկը Օտոօն հետ միասին դնացել են Ռիչարդի մօտ և նորան, ինչպէս իւրեանց հաւատարիմ բարեկամն, յանձնել են ամրոցի կառաւարութիւնը։ Նորա օգնականները մի և նոյնն էին ասում, մինչև որ բոլորը հա-

ւատացին այդ բանը և մինչեւ անգամ գովումէին նորան այդքան անշահասէր լինելու համար։

Բայց Խիլդեգարդան շուարած էր. նորան կողպեցին մէկ մութ ու խոնաւ բանտի մէջ, ուր հազիւ համնումէր լոյսը։ Ամէն օր անգութ բանտապետը բերումէր մի կտոր սև հաց ու մի թաս էլ ջուր։ Ոչ մէկ անգամ խօսք չէր ասում և չէր մտածում, կոմսուհին կենդանի է թէ մեռած.— նորա համար թէ նա թէ մէկ շուն դիսի մէկ էր։

Մատղաշ Կայլըուրդաի հետ էլ մի և նոյնն արեցին։ Այս խեղձերու ցաւերի ու տառապանքների

վիայն միայն Աստուածն էր. նորա  
վերայ ունէին գրած իւրեանց յոյ-  
սը, նորանից էին սպասում օգ-  
նութիւն։ Այս, ովկարէ նկարագ-  
րել, պատմել, նորանց կրած նե-  
ղութիւնները, ովկարէ համարել  
նորանց աշքից թափած արտա-  
ռուքները։ Բանտերը նման էին  
մութ ուխոր գերեզմաններու։

— Թէ գիտենար որդիս այս իմ  
դրութիւնը, ասումէր ինքն իւրեան  
կումսուհին, գիտենար թէ նորա  
ցանկութիւնն հասցըց ինձ այս  
տեղը…… այն ժամանակ…… բայց  
ինչ մեղաղը Օտտօին, նա ու-  
ղումէր հօրը գերութիւնից ազա-

տել.... Այս, ինչ կը լինի ինձ  
հետ.... Ուր է աղջեկս.... ինչ  
են անում նորա հետ....

Այսպիսի ժոքերը երբ նորա ե-  
րեակացութեան առաջ գալիս էին,  
ընկնումէր ծնկան վերայ ու աղօթը  
էր անում Աստուծուն։ Աղօթը  
անելից յետոյ վոքը ինչ զօրու-  
րութիւն էր ստանում։ Փոքը ժա-  
մանակ անց էր կենում, Վայլը ու-  
գախ միտն էր բերում ու կըկին  
յուսահատութեան մէջ էր ընկ-  
նում։ Չ'էր գիտում խեղջը թէ  
միայն մշկ պատն է բաժնում նո-  
րան իւր սիրելի աղջկանից։ Քա-  
նի անդամ նա փորձումէր բանտա-

պետից մէկ բան խմանալ, բայց նա  
պատասխան չէր տալիս, ձայն էլ չէր  
հանում։ Հատ անդամ Կոմսուհին  
այս մտածմունքների մէջ քնումէր,  
երազումը տեսնումէր Վայլըուր-  
գախ, Օտտօխ, Ռիչարդին. Նա  
խօսումէր նորանց հետ, վաթթ-  
վումէրույանկարծքնիցը արթն-  
ցած, տեսնումէր միսյն բանտի  
ոկլոր պատերը։

~~ԱՇԽՈՅՑ~~

6.

ՕՍՏՈՆ ՀԱՍԿՈՒՄ Ե ԵԳԻՊՏՈՍ :

Չահիլ Կոմսի Ճանապարհորդութիւնը շատ հանգիստ էր: Գերութիւնից իւր հօր ազատելու ցանկութիւնը, որն որ վառուած էր նորա սրտի մէջ, յաղթումէր այն դժուարութիւններին, որոնք երկար ճանապարհորդութե՛ մէջ պատահումեն միշտ: Օտտօն անցկացաւ Գերմանիա, Իտալիաև Հասսաւ Վենետիկ, ծովերու թագաւորը: Ի՞նչ սիրուն տեսարան բաց-

վեցաւ նորա աչքի տռաջեւ։ Այն  
նեղութիւնները որ փորձել էր  
դարդակ դաշտերի ու անապատ-  
ների մէջ, բոլորը մոռացաւ այս  
գեղեցիկ քաղաքին մօտենալից։  
Կա հեռուից զմայլումէր նորա գի-  
դանտեան շէնքերով, երկնահաս  
եկեղեցիներով, ահագին պալատ-  
ներով։ Զմայլումէր անթիւ ջրանց-  
քեայ փողոցներով և նորանց վե-  
րայ արագաշարժ վենետիկեան նա-  
ւակներով, որ նետի նման վազու-  
մէին դէսուդէն, ժրածան թիա-  
ւարներու ձեռովը։

Վենետիկի մէջ ամէն բանն ան-  
սովոր էր երեւոյ Կոմսի աչքին։

‘Կա զարմանումէր, տեսնելով ու  
միջերկրական ծովի ամէն կողմից  
դալիս են պաշարով և ապրանքով  
բեռնաւորած նաւեր։ Կառշաղ-  
րութեամբ նկատումէր կայսերը  
(Եակքանները), չուանները և նա-  
ւին պատկանեալ այլ և այլ բաները։

Օտտօն շուտով թողեց Վենե-  
տիկը, որովհետեւ նորան մէկ նաւ-  
հանդիպեցաւ, որ Երեքօրից պէտք  
է Եղիսլոս հեռանար։ Այն ժա-  
մանակները Վենետիկցիք մեծ ա-  
ռուտուր ունեին արևելեան բնա-  
կիչների հետ։ Օտտօն, ցանկանա-  
լով հօր հետ շուտով տեսնվելը,  
նաւապետի հետ համաձայնեցաւ

գնալ և հինգ օրւայ Վենետիկ ե-  
կած էր, երբ նորա աչքից քաղաքն  
սկսեց անհետանալ, կորչել: — Օտ-  
տօն հեռացաւ Վենետիկից:

Կոմսի ծովային ճանապարհոր-  
դութիւնը շատ յաջողակ էր: Աս-  
տուծոյ ձեռքը նորա վերայ էր:

Վերջապէս Ռիչարդի որդին  
տեսաւ Եղիպտոսի ավել ու հենց  
որ յամաքի վերայ իջաւ, սկսեց  
հօր վերայ հարց ու փորձ անել,  
ինչպէս էլնաւասկետը նորան խոր-  
հուրդ էր տեսել: Մեծ դժուարու-  
թիւնով իմացաւ, թէ Ռիչարդին  
առողջացրել տարել են վերին Ե-  
ղիպտոսը և թէ նա՝ փող չունե-

նալու մասին՝ մնացել, և մինչև  
հիմա գերութեան մէջ։ «Եղի ըռ-  
պէ Օտտօն Ճանապարհ ընկաւ և  
անցաւ ահագին ։ Եեղոս դետը։  
Ոչինչը չէր կարողանում նորան  
կանգնեցնել. ոչ այն արեւի պապա-  
կիչ տաքութիւնը, ոչ արեւնարբու-  
անասուններից վախը, ոչ երկար  
Ճանապարհի դժուարութինները։  
սլետք է հայրը ազատել և սյսմիտ-  
քը միայն տալիս էր նորան զօրուի  
ամեն բանի դիմանալու։ Աերջա-  
պէս հեռուից երևցան պիրամիդ-  
ները, այն խորին հնութե՛ յիշա-  
տակարանները։

Մէկ անգամ, երբ Օտտօն նըս-

տել էր արմաւէնի ծառի տակը, որ հանդստանայ, յանկարծ երեցաւ մի փոքրիկ բան, որն որ շարժումէր։ Այս առարկայն մօտենումէր։ Քանի մի ժամանակից յետոյ, տեսաւ կոմսը մէկ մարդ՝ պատուելի կերպարանքով, սպիտակ մօրուքով, գալիս էր, ձեռին մէկ սախոր։ Որովհետեւ նա երկար շորեր ունէր հագած, այս պատճառով Օտտօն կարծեց թէ ճգնաւոր է։

Կոմսը այս մարդու պատահելով շատ ուրախացաւ։ «Կա մօտեցաւ այն ծերին, չորեց նորա առաջեւ և օրհնութիւն ուզեց։ Անա-

պատի բնակիչը, վերկացնելով Օտոխն՝ ասեց գերմաներէն։

— Ես ոչ քահանայ եմ, ոչ էլ իրաւունք ունեմ օրհնելու։

Բիչարդի որդին շատ զարմացաւ, լսելով իւր հայրենի լեզուն։ Սիրտը ակամայ քաշումէր նորանդէպ՝ ծերը, որի անապատական կեանքը նորան հրաշք էր երևում։ Օտոն առաջարկեց անձանօթին որ հանգստանայ ծառի տակը ու իւրեան հետ բան ուտէ։

— Ես սլարտաւորեմ ձեզի մեծարել, որովհետեւ այստեղ է իմ բնակարան։

Ճերը, այս ասելով՝ մօտեցաւ

աղբիւրին, լցրեց սափորը ջրով և  
Օտտօի ձեռիցը բռնելով՝ տարաւ  
իւր քարանձաւը, որտեղ նա շատ  
տարիից կենումէր:

Ճերի ընակարանի մօտ խաչ էր  
շինած, ճառի ճիւղերից հիւսած,  
նորա մօտովը անյնելու ժամանակ,  
երկուսնէլ խաչ հանեցին.

— 60 —

7.

ԱՆԱՊԱՏԻ ՄԵԶ ԽՕՍՎԿՑՈՒԹԻՒՆ :

Ճռերը նստեցրեց կոմսին քարի  
վերայ ու առաջը դրեց արմաւ,  
թուզ և զանազան պտուղներ։ Յե-  
տոյ, ինքն էլ նստեց նորա կողքին  
ու հարցրեց.

— Աւելք, խնդրեմ, ի՞նչ բանը  
հարկադրեց ձեզ այս անքնակ և  
զարհուրելի անապատ գալու։

— Ես դալիս եմ Եւրոպաից և  
փող եմ տանում, որ թափեմ  
հայրս, որն որ Եգիպտոսումը դե-  
րի է ընկած։

— **ԶԵՐՈՐԴԻ ԽԱԼԱՆ ԱԵՐԸ ԻՆՃ ՀԱՐ-**  
**ԺՈՒՄԵ և դուք, ՚ի հաղթել է, ձեր**  
**ՆԱՊԱՏԱԿԻՆ ԿԸ ՀԱՄԵՐԸ, ՈՐՈՎՀԵ-**  
**ՄԵ ԱՅԾ կը լինի ձեզ օգնական։**

— Իսկ դուք շատո՞ց է որ այս  
անապատումն էք բնակում։

— Համարեա՛ քսան տարի է։  
Ինձի գերեցին. և թէպէտ ազգա-  
կաններիս շատ անգամ ուղարկե-  
ցի նամակներ, որ ինձ թափեն,  
բայց ոչինչ պատասխան չը ստա-  
ցայ։ Զեմ գիտում կենդանի են  
թէ մեռած։ Բայց դուք շատո՞ց է  
որ հօրից բաժնվելեք։

— Երկու տարի է։

**ԱՅՍՊԵՇԱՆ ՈՐՔ ԲԱւական ԵՐԿԱՐ**

Ժամանակ խօսութին պատերազ-  
մի վերայ, Տաճկաց վերայ, Յան-  
կարծ ծերը վեր թռաւ տեղիցը  
ու զարմանալով ասեց.

— Այդ ինչ է մատին։ Այդ մա-  
տանին ինձ ծանօթ է։

Օտոն հանեց մատանին մատի-  
ցը և տւեց անապատի բնակչին.  
Նա էլ փոքր ինչ շուռ ու մուռ  
տւեց ու յետոյ՝ արտասուալի ձայ-  
նով ասեց.

— Աստուած իմ. սյս իմ իշխա-  
նուհւոյս, իմ սիրելի ամուսնիս  
նշանառութե՛ մատանին է։ Ո՞վ  
էք դուք, ասացէք խնդրեմ։ Ումի՞ց  
էք ստացել սյս մատանին։

— Եթէ սա ձեր ամուսնի մատանին է, ուրեմն՝ պատրաստվեցէք իմանալու, որ……բայց չէ. ես չեմ ուզում ձեղ վշտացնել վատ վատ համբաւներով։ Դուք առանց նորանց էլ բաւական դժբաղդ էք……

— Ասէք, ասէք. կանչեց ծերը։ Ոչինչ մի՛ ծածկէք, պատրաստ եմ լսելու։ Ես ՚ի վաղուց մեռած եմ աշխարհիս համար և ոչինչի յոյս՝ ունեմ, ուրեմն՝ հանդարս կը լսեմ այն համբաւները, որոնք ինձ կը հաղորդէք։

— Ուրեմն՝ իմացէք, ով իշխանազն տէր, որ այս մատանին ստացայ ձեր որդիից, որն որ ձեռիս վախճանվեց։

— Որդիս մեռել է։ Ո՞վ Ասու-  
ուած, կարո՞լ էի միթէ այդալիսի  
տարաբաղդութեանը սպասել։  
Բայց խեղճ կինս. ո՞հ, ինչպէս  
դժբաղդ է նա, իմացած կը լինի  
առանց որդւոյ. ես՝ ի վաղուց մե-  
ռած եմ նորա համար։

— Չեր կինը, իշխանազն տեր,  
այդ դժբաղդութիւնը իմացաւմիւս  
կեանքումը միայն։

— Ի՞նչ էք ասում. ո՞լ ասեց  
ձեղ. արդեօք չը խարեցի՞ն ձեղ։

— Ես այդ իմացայ ձեր որդւոյ  
բերանից։ Կորա մայրը այնքան  
վշտացած էր եղել ձեր հեռաւո-  
րութեամբ, որ չէր դիմացել, վախ-

Ճանվել էր: Ազգակիցները՝ տես-  
նելով նորա ջահիլութիւնը, ձե-  
ռից խլել էին բոլոր ժառանգու-  
թիւնը: Չեր որդին որ, էլած չէ-  
լածից այս մատանին միայն ունէր  
միացած, իւախել էր ու երկար ժա-  
մանով անտառների մէջ էր ման-  
գալիս: Միանգամ նորան պատա-  
հել էին աւազակները ու այնպէս  
վիրաւորել: Էին որ մահուան  
դուռն էին դցել: Այս ժամանակես  
որսի էի ման գալի, երբ դույ ջա-  
հիլիշանագնին կիսակենդան .ա-  
ռայ ուսիս ու տարայ ամրոցս: Մա-  
հից առաջ նա պատմեց մեզ իւր  
գլխի վերայ անցածը ու այս մա-

տանին ինձ յիշատակ տուեց։ Զեր  
որդին մեռաւ, ինչպէս պատգա-  
նումէր քրիստոնեային, ներելով  
բոլոր թշնամեացը։

Ճերը լաց եղաւ։ Քանի մի ըո-  
պէից յետոյ նա չոքեց ու ձեռնե-  
րը երկինք բարձրացնելով՝ ասեց։

— Տէր Աստուած։ Դու իմ ամէն  
սիրածներիս մօտդ ես կանչել,  
թող ես էլ նորանց հետ միաւոր-  
վեմ։ Կամ եթէ վիճակած է ինձ,  
այս անապատ տեղումը, երկար  
տատանվիլ, զօրութիւն տուր ինձ  
որ դիմանամ այս աշխարհի նե-  
ղութեանցը։

Ճերը սուս կացաւ։ յետոյ՝ երե-

ու ձեռներով ծածկեց, կիսաձայն  
աղօթք կարդաց ու ոտին կանգնե-  
լով՝ մօտեցաւ Օտտօին.

— ՄԵծառդի երիտասարդ, թոյլ  
տուէք ինձ խմանալ ձեր անունը.  
ով էք կամ որտեղ էք ծնվել:

— Ես ծնվել եմ Վարչպայլու-  
մը, անունս է Օտտօ, կոմս Ռիչար-  
դի որդի:

— Ալիթէ, դուք կոմս Ռիչարդի  
որդին էք, իմ սիրելի բարեկամիս  
որդին էք: Օ ինձ համար մեծ ու-  
րախութիւն է, որ որդիս ձեր ձե-  
ռունն է մեռել: Գոնէ նորա մա-  
հուան անկողինը սպառած է եղել  
բարեկամներով:

— Հա՛, իշխանազն . մենք նորան  
թաղեցինք ինչպէս հարկն էր :  
Ավանս, իւր նեղ գրութեան ժա-  
մանակը նա չը դիմեց մեղ . մենք  
անսպատճառ կ'օդնել, ինք նորան ու-  
բոլոր ժառանգութիւնը կը վերա-  
դարձնել, ինք :

— Շնորհակալեմ, կոմս, իմ որդւ-  
ւոյս այդքան բարերարութիւն ա-  
նելու համար, նորա վերայայդքան  
հոգացողութիւն ունենալու հա-  
մար: Ես իմ կողմանէ, երախտագի-  
տութիւնս կը հաստատեմ, օդնեւ-  
լով ձեր հօր ազատութեանը: Ին-  
ձի ոչինչ խոստմունքը չէ բոնում  
այստեղ և եթէ Ճգնաւորի շորեր

Եմ հազել, պատճառն այն է՝ որ  
այսուեղի անհաւատները թէպէտ  
քրիստոնեաներին շատ են հալա-  
ծում, այնու ամենայնիւ Ճնաւոր-  
ներին պատիւ են տալի. Բայց թէ՝  
ինչպէս ես այսուեղ լնկայ, ահա  
պատմեմ ձեզ: Գերի լնկնելից յե-  
տոյ, փոքր ինչ ժամանակ որ ան-  
ցաւ, տեսան որ ոչ ոք գլուխս չէ  
թափում, վեր առան ու ծախեցին  
մէկ խստասիրտ մարդու վերայ. նա  
էլ ինձ հետ այնպէս անգութ սկ-  
սեց վարւել, որ չը կարացի դիմա-  
նալ ու փախայ: Մէկ ձեր մարդ  
լնդունեցինձ, տուեց այս հազուա-  
տը և խորհուրդ տեսաւ որ այս ա-

նապատի մէջ թագ կենամ։ Զեզ  
էլ անօդուտ չէր լինել այսպիսի  
շոր հաղնելը, որովհետեւ դուք սո-  
րա մէջ առաւել հեշտութեամբ  
կարող էք ճանապարհորդութիւն  
անել և ազատել հայրը գերու-  
թիւնից։

— Բայց որտեղից գտնեմ այդ-  
պիսի շորեր։

— Ես մէկ էլի ուրիշ ունեմ։ Դմ-  
բարերը երկու տարի առաջ՝ ու-  
ղարկել էր ինձ, կարծելով՝ թէ այս  
մաշել եմ։ Բայց ասէք, խնդրեմ,  
մի՛թէ ազատութեան համար՝ փո-  
ղը հետերնիդ էք ըերել։

— Հրամարէք, իշխանազն տէր։

— ՄԵԹԵ . զարմանալի բան է  
որ Ճանապարհին ձեզ չեն կո-  
ղոստել, Աստուած ձեզ վերայնա-  
խախնամութիւն է, ունեցել: Մի-  
այն, խնդրում եմ, Ճանապարհին  
ինձի չը մեծացնէք, իշխանազն  
կանչելով. այդով կարող էք կաս-  
կածել տաք մեզ վերայ: Անունս  
Անտօն դրեք առաւելլաւ կը լինի:

Այս խօսելումը գիշերն էլ մօ-  
տեցաւ: Ճանապարհորդները, այս  
անակնունելի դեպքի համար, Աս-  
տուծուն շնորհակալութիւն ու-  
ղարկելով՝ սպակեցան, որ փոքր  
հանգստանան:

8.

ԱՆԱՊԱՏ :

ՀԵՆց առաւօտը լուսացաւ, Ան-  
տօնը մեր ջահիլ տղին ճղանաւո-  
րի շորեր հագցրեց: Արեգակի ըլքա-  
ւական բարձրացել էր Երկնային  
կամարի վերայ: Օտտօն նախաձա-  
շել արեց, բայց ծերը ոչինչ չը-  
կերաւ, որովհետեւ իւր անապա-  
տական բնակարանի մեջ ուղումեր  
ծոմով և աղօթքով անցկացնել այս  
վերջին ժամանակը: Դուրս դնա-  
լից առաջ իշխանազնը պտուղներ

Հաւաքեց ու սախոր վեր առաւ  
հետը որ աղբիւրիցը ջուր լցնէ:  
Յետոյ՝ երկուսը միասին Աստու-  
ծոյ անունը յիշելով՝ ընկան ճա-  
նապարհ:

Անկարելի է նկարագրել թէ,  
ինչ էր զգում ծերը հեռանալով  
այնտեղից, ուր այնքան տարի անց  
էր կացրել հանդարտութե՛ մէջ:  
Դեռ երեկի նա կարծումէր թէ  
այս անապատի մէջ ոլետք է մեռ-  
նի, իսկ այսօր իւր խաղաղ ընակա-  
րանը ոլետք է աշխարհային բաղ-  
մաձայն կեանքի հետ փոխի: Ճա-  
նապարհորդները գնումէին դէռ  
'ի պիրամիդները: Օտտօն ասումէր

ծերին թէ շատ զարմանումէ այս  
հնութեան յիշատակների մեծու-  
թեան վերայ :

— Ճամանակի երկարութիւնը, ա-  
սումէր ծերը, ոչինչ վեաս չէ հաս-  
ցրել այս սկիրամիդներին, պատ-  
ճառը որ շատ ամուր են շինուած :  
Այս արուեստական լեառները ա-  
մէնին զարմացնումէն . տե՛ս, այս-  
տեղից մինչևի այն սկիրամիդները՝  
եօթանասուն մօտ վերստ կը լինի,  
և չը նպյելով այսպիսի հեռաւո-  
րութեանը, տե՛ս ինչ մեծ են երե-  
ւում : Հինգ վերստից խօ կը կար-  
ծես թէ հինգ քայլի վերայ են :  
Ակամայ կամօք մարդ զարմանումէ

Երբ միտն է բերում թէ քանի  
հարիւր տարի առաջ շինվել են,  
բայց մօտից տնտղելիս, կարծու-  
մես թէ երեկ են աւարտել։ Այս  
կողմերը Եղիպտոսի առաջուայ  
շքեղութեան յիշատակներ շատ  
կան. սյստեղ կը գտներ քանդված  
մեհեաններ, լարիրինտներ, պա-  
լատներ . . . : Ի՞նչ պէտք է ասէին  
հին Եղիպտացիքը, եթէ տեսնէ-  
ին որ նորանց շքեղազարդ շեն-  
քերը՝ շնագայլոց ընակարան է  
դառել, որ նորանց քանդված մե-  
հեաններովը՝ վիթերն ու Եղիպ-  
տահաւներն են զբօնում։

Մէկսյսպիսի զգալի տեսարանն

Եւ Ֆիվե աւերակներն են. Ես եր-  
բէք չեմ մոռանայ այն տպաւորու-  
թիւնը, որ նորանք իմ մէջ թողե-  
ցին. Այս էր երեկոյեան, արեգա-  
կը մայր էր մտնում: Համատարած  
լոռթի էր թագաւորութ ու ցե-  
րեկուայ տաքութիւնը փոխվել էր  
գիշերուայ հովի հետ: Ես մօտե-  
ցայ այն երեսելի քաղաքի աւերակ-  
ներին, նստայ կտոր սիւնի վերայ  
և մոքիս հետ ընկայ: Այս հարու-  
ստ, մէկ ժամանակ, քաղաքի քա-  
րուքանդ արած շինութիւնները  
տեսնելիս, ախ քաշեցի: Ահա, ա-  
սեցի Ես, հարիւրադոնեայ, քա-  
ղաքների մայր անուանած Ֆիվե

տիսուր մնացուածները։ Ուր են  
հոյակասլ մեհեանները, և ըեանց  
երեւելի պատգամներով։ Ուր են  
հարուստ բնակիչները։ Որտեղան-  
դադար հնչւումէին ուրախալի ձայ-  
ները՝ այնտեղ կանդնած են փուլ  
եկած պատերը։ Մէկժամանակ ըո-  
լոր ազգերը դիմումներն այս կողմը՝  
վաճառականութեան համար։ իսկ  
այժմ. . . . փողոցները դարդակ,  
պատգամները դարդակ, ժողովրդի  
բազմաձայն ու բազմաշխատ գոր-  
ծունեութիւնը փոխվել է մահ-  
ուան լութեան հետ։ Ահա մարդ-  
կութեանս համար լաւ դաս։ 'Ի  
զուր կը ոկտենք քըքըրել այս հոյա-

կապ շինութեանց հիմնողների ա-  
նունները, ՚ի զուր կը սկսենք մար-  
մարիոնի կտորների վերայպատաս-  
խանի մանդալ — Ոչինչ չենք գըտ-  
նել: Մինչև անդամ թափառա-  
կան Արաբացին էլ, այս առաջւայ  
լուսաւորութեան յիշատակների  
մօտովը անցնելիս, մէկ երեսը չէ  
թեքումնորա կողմը: Ահա, ինչեր  
էի մտածում, սիրելի Օտոո, այն  
հին շինութեան աւերակներին  
նայելով: Մտածելով մարդուս այս  
ոչնչութեան վերայ, որն որ ամէն  
քայլի մէջ տեսնումենք՝ ասեցի.  
ով Աստուած, միայն դու կաս և  
մնաս յաւիտեան:

— Ասէք ինդրեմ, ովքեր են այս

կողմի բնակիչները կամ ինչպէսի  
մարդիկ են, հարցրեց Օտտօ:

— Այս անապատի կողմերու բնա-  
կիչները Արարացիք են: Սորանք  
են որ մինչև հիմա անխախտ պա-  
հումեն այն առաքինութիւնը, որը  
մեր նախահարց ժամանակն էր.  
խօսքս հիւրենկալութեան վերայ  
է: «Սորանք բաց ունեն միշտ տան  
դռները՝ ճանապարհորդ բնդու-  
նելու համար: Սորանց հարստու-  
թիւնը ոչխարներու մեծ մեծ հօ-  
տերն էն: Արարացիք հիւրին ըն-  
դունումեն սրտաշարժ բարութը:  
Ճանապարհորդները նորանց ըն-  
ծայումեն մի բան, թէ ոչինչ չու-  
նեն, տալիս են ծաղիկ կամ ծառի

Ճիւղ։ Այս հասարակ ու բանաստեղծական նշանով խնդիրքը՝ բաւական է, որ նորանց սիրտը շարժէ։ Աիրով ընդունելից յետոյ՝ նորանք ամէն կերպով աշխատումնն, որ իւրեանց հիւրը լաւ ժամանակ անց կացնէ։ Լաւ դառն են խորովում ու գնումնն առջևը, որ առաջ նա վերառնէ։ Հիւրը դո՞նէ երեք օր սլետք է մնոյ այնտեղ ու տանտէր համարէ իւրեան։ Արաբցին երբէք նորան խեթ աչքով չի մտիկ տայ. ընդ հակառակն՝ նա իւրապարտաւորութիւնը չը կատարելու վերոյ մատածելը մինչեւ անդամ յանցանք է համարում։

9.

ԵՐԵՎԱՆԻԿ ՀԱՅՐ :

Ճանապարհորդները հանդարս  
անցան սյն անապատով։ Ճգնաւո-  
րական շորերը նորանց ամէն հա-  
լածանքից, անպատճթիւնից  
պաշտպանումէր։ Չորս օրից նո-  
րանք մէկ քաղաք հասան, որտեղ  
դիշերը անցուցին։ Օտտօն սկսեց  
հօր մասին հարցու փորձ անել ու  
խմացաւ, որ նորա տէրը հինգ մղոն  
հեռու քաղաքի մէջ է, կենում։  
Մանուկ երիտասարդը՝ ՚ի վաղուց

ուրախանումէր հօր ազատութեր  
վերայ, և այս ճանապարհորդու-  
թեան մէջ քաշած նեղութիւն-  
ները աչքին չեին երեսում։ Ռի-  
չարդն էր միայն նորա աչքի առա-  
ջը։ Միւս օր առաւօտը իշխանազն  
ու Օտոօն ուղղեցին իւրեանց  
քայլերը դէպ ՚ի այն քաղաքը,  
բայց Նեղոս գետին մօտիկցած ժա-  
մանակը, նորանք հարկադրված էին  
դէս ու դէն ընկնելու, մինչև անց-  
քը կը դանէին։ Արեգական ճառա-  
դայթները այնքան սաստիկ այրու-  
մէին իւղձ Օտոօին, որ նա հա-  
ղիւ հաղ դիմանումէր շոքին։ Զա-  
հիւտղան վախումէր որ հիւանդա-

նայ, ու այս բանի վերայ մտածելիս՝ նա դողումէր : Բայց ալևոր իշխանազնը միսիթարումէր նորան, ասելով թէ՝ քանի մի ժամկց կը տեսնվեն Ռիչարդի հետ :

Պերջապէս ճանապարհորդները ողջութեամբ հասին այն քաղաքը, որն որ կանգնած էր բարձրութեան վերայ, ուր տեղից երեւումէին Կեղոսի ափերը : Մանուկ կոմսը աղօթումէր առ Աստուած, որ նա իւր նախախնամող ձեռովը առաջնորդէ նորան այս ըուլէիս և օդնէ, հօր ազատութեանը :

Քաղաքի մէջ տեղը մահմետականաց կոքասունն էր, երկու աշ-

տարակով (բուրջ)։ Իշխանազնը  
մօտեցաւ նորան ու տեսնելով ծեր  
մարաբուտին \*), հարցրեց.

— Շնէ ամենակարողի անունը կը  
սիրեք, ասէք ինձ, որտեղ է Ալե-  
ալ-Արունի տունը։

— Ալիի տունը այս տեղից հեռու-  
չէ, այս ասելով՝ մարաբուտը ցոյց  
տուեց Մահմետականի տունը։

Իշխանազնը շնորհակալութիւն  
արեց նորան ու գնաց դէպի ՚ի այն  
տունը։

Հէմբի մէջ նստած էր գերին։  
Ճանապարհորդները հարցրին.կա-

---

\* ) Մահմետականաց քահանաց։

բողեն արդեօք նորա տիրոջը տես-  
նել: Գերին գնաց ու շուտ յետ  
դառաւ: «Յա համբուրեց անծա-  
նօթմարդկանց շորը, ՚ինշան հաշ-  
տութեան, և առաջնորդեցմինչե-  
ւի սենեակը, ուր արդեն պատ-  
րաստած էր զովարար խմելիք:

Իմ տերս հիմա սլարասլ չէ, ա-  
սեց գերին, ու մինչեւ նորա գալը  
անուշարեց: Ճանապարհորդներն  
էլ շատ ուրախացան այս բանի  
վերայ ու մեծ ախորժակով սկսան  
խմել:

Մէկ ժամ անցաւ ու դեռ տերը  
չէր երեսում: «Որանք անհամբե-  
րութիւն սպասումէին: Յանկարծ

դուռը բացւեց, ներս մտաւ Ալին։  
Ճեր իշխանազն գլուխ տուեց նո-  
րան ու ասեց.

— «Երկայացնումեմ քեզ, տէր  
իմ, այս ջահիլ քրիստոնէային։  
Աս եկել է այստեղ Եւրոպայի մէ-  
ջից իւր հօրը տեսնելու, որ քեզ  
մօտ գերի է և խնդրումէ քեզ ա-  
զատութիւն տալ նորան, որ իւր  
մօր և քրոջ արտասուքները ցա-  
յաքեցնէ։ Խղճա՛ այս երիտասար-  
դին, մեծահոգի Ալի, ու կատարէ  
սորա խնդիրը։ միթէ քեզ չէ  
ժարժում այս քրիստոնեայի որ-  
դիական սէրը, որ տուն ու տեղը  
թողած, այսպիսի երկար ճանա-

սլարհ է եկել, ծովեր է անցկացել, հազարութիւն ցաւի է դիմացել, — և ինչու, — հայրը ազատելու: Դու հարուստ ես. բայց Աստուած կը մեծացնէ հարստութիւն այս բարի գործի համար, կը տայքեղ առողջութիւն և կը բանայիւր ողորմութեան դուռը:

— Այս ջահիլի հօր անունը ինչպէս է, հարցրեց Ալին, հետաքրքրութեամբ նայելով Օտոօին:

— Եւրոպայում նորան անուանութիւն Ըլարցվայլդի Բիչարդ.

— Իսկ գո՞ւ ով ես:

— Ես անապատի մի խեղճ բնակիչ եմ, որ արդէն քսան տարի

ապրումէ մէկ քարանձաւի մէջ։  
Այս, ուշը իմ, ես այս երիտասար-  
դի համար խնդրումեմ այնոր հա-  
մար, որ սա իրաւունք ունի երախ-  
տագիտութիւն պահանջել ին-  
ձանից։ Անդոհի լինելը մեծ մեղք է։  
Սա լինդունել է իմ որդւոյս, որին  
արտաքսած են եղել չարամիտքա-  
րեկամները իմ սեպհական տնից։  
Որդիս անտառի մէջ վիրաւոր-  
ուած վախճանվում է եղել, երբ  
սա նորան գտել է, ու ինքը տարել  
է իւր տուն։ Որդիս վախճանվել  
է սորաև սորա հօր ձեռքումը, որ  
մէկ ժամանակ ընկերս եր եղած,  
սոքա յանձն են առել քրիստոնէ-

ական կերպով թաղել նորան։ Ասա՞ , ուրեմն , Սլի , չը ալէտք է՞ որ  
ես երախտագիտ լինեմ։

— Որդիական և ընկերական սէ-  
րը մեծ առաքինութիւններ են։

Յետոյ Սլին հրամայեց իւր ծա-  
ռային , որն որ երեք ծխածիգ բե-  
րեց , ներկայացնել հին հաստլի-  
կին (այսպէս էին անուանում մահ-  
մետականները կոմա Պիչարդին)։

Հինգ րոպէից ծառայն յետդար-  
ձաւ մէկ ուրիշ մարդու հետ արեւ-  
մտեան շորերով։ Օտտօն նորան  
տեսածին պէս , փաթթվեցաւ շըն-  
քովը ու կանչեց .

— Ահա հայրս :

ՈՎ կարէ նկարագրել թիշարդի  
զարմանքը, որն որ հազիւ ճանա-  
չեց իւր որդին միանձնական կո-  
պիտ շորերի մէջ։ Բաց ՚ի այդ, ջա-  
հիւ կոմսի վարդի պէս բացուած  
երեսը աշխատանք ու շատ նեղու-  
թիւն քաշելից դեղնել, թառա-  
մել էր և Ափրիկէի այն պապակիչ  
արեգակից այրվել էր։ Կորանց  
արտասուբները դետի պէս սկսան  
ողողալ ու խառնվել միմեանց հետ  
Ալի-ալ-Արունը զմայելով նա-  
յումէր այս սրտաշարժ տեսարա-  
նին։ Վերջը՝ մօտեցաւ Օտտօին,  
բռնեց նորա ձեռիցը ու ասեց.

— Դու իմ սիրուր շարժեցիր,

քո հայրը հիմա ազատ է, այ երի-  
տասարդ . Ես նորան դարձնում էմ  
քեզի, որովհետեւ դու արդեն ա-  
զատեցիր, թափեցիր հայրդ, այս  
երկայն ճանապարհորդութե մէջ  
քաշած նեղութիւններովը : Այդ-  
պէս դէպի ՚ի նա երախտագէտ կաց  
ու երջանիկ կը լինես :

Բիչարդն ու Օտտօն շնորհակա-  
լութիւն արին Ալեխին այս մեծահո-  
գութեան համար :

— Դուք ոչինչ չեք կամենում .  
հարցրեց Բիչարդի նախկին տէ-  
րը : Ինձ մօտ հանգստացէք ու վա-  
զը կը հրամայեմ որ առաջնորդեն  
ձեզ մինչեւ Գասմիկտոր, որտեղ

Հեշտ կարէք Եւրոպայ գնացողնաւ  
գտնել:

Մահմետականը այսասելովդար-  
ձաւ իւր առանձնասենեակը, թող-  
նելով սենեակումը կոմսին, որն որ  
իւր գերութիւնից այս անակնու-  
նելի ազատութեամբը յափշտակ-  
ված էր:

Այս միջոցումը անապատի բնա-  
կիչը մօռեցաւ Ռիչարդին:

— Հայրիկ, ասեց Օտտօն, ահա  
սա է իշխանազն Բոբերտ Գրեն-  
ֆելդը: Սորան եմ պարտաւոր ձեւ-  
զի շուտ գտնելովը:

Ռիչարդը իւր աչքերին չէր հա-  
ւատում: «Կայումէր այնպէս, որ

կարծես թէ աշխատումնը միտ բերել իւր հին բարեկամի երեսի գծերը։ Վերջապէս, վաթթվելով նորա հետ, կանչեց.

— Ուրեմն ես իմ հին բարեկամիս եմ տեսնում, բորերոտին։ Այս, ինչպիսի երջանկութիւն է։ Ո՞վ իշխանազն, այդ ի՞նչ հագուստի մէջ եմ տեսնում ձեզ։ Ի՞նչը հարկադրեց ձեզի միանձնական շորեր հանդնելու։

Իշխանազնը չը դիմէր նոյնպէս, թէ ինչպիս յայտնէ իւր ուրախութիւնը։ Յետոյ նա պատմեց թէ ինչպիսի կեանք է վարել անսպասումը։

10.

ԵՒՐՈՊԱՑ ԴԱՌՆԱԼԸ :

Ալին միւս օրը կանչեց Օտտօին  
իւր հօր հետ միասին, երեկուայ  
խոստմունքը կատարելու : «Վա նո-  
րանց տուեց ոսկեռվ լի քսակ ու  
թիշարդի աղատութե վկայաթուղ-  
թը : Յետոյ նա նորանց բարի ճա-  
նապարհ ցանկալով հրամայեց իւր  
ճառաներին, որ մինչև Կեղոսը ա-  
ռաջնորդեն : Այսուղեց ճանա-  
պարհորդները կարող էին գետո-  
վը հասնել մինչև Կամիկտտա :

የተጠቀሱ የሚከተሉ ስርዓት ተስፋዣ  
በዚህ አገልግሎት የሚከተሉ ስርዓት ተስፋዣ  
በዚህ አገልግሎት የሚከተሉ ስርዓት ተስፋዣ

Պոբերալ սպառւմէր նորանց  
պողոցումը և Երեքը միասին, Ալիի  
Երեք ծառաների առաջնորդու-  
թեամբ, գնացին դեսլ ՚ի Կեղոսը:  
Գտետին հասած ժամանակ, ծառա-  
ները յետ տարձան իւրեանց տի-  
րոջ մօտ, կըկին շնորհակալու-

թիւն տանելով կոմսից ու նորա  
որդիցը:

Ճանապարհորդները յաջողուք  
հասան մինչև Դամիէտտան: Այս-  
տեղ նորանք սպասեցին մի քանի  
օր, վերջապէս մէկ նաւ գտան, որ  
Գենուա էր գնում: Ըորերը փո-  
խեցին ու նստան նորա վերսոյ:

Երեք շաբաթից յետոյ կոմսը  
հասաւ Գենուա, ուր երկու օր  
մնալից յետոյ որդւոյ ու իշխանազ-  
նի հետ յուղի անկան Գերմանիա:

Բիչարդը ցանկանումէր շուտ  
տեսնվիլ իւր սիրելի ամուսնոյ ու  
նազիկ աղջկայ հետ:

Ճանապարհորդները անց կա-

ցան Պիեմոնտեան, Սավօնեան և  
Զվեցերեան սարերը: Վերջը տե-  
սան նորանք Կոնստանտեան լիճը և  
մի քանի ժամից հասան Շվաբիա:  
Առն մի քայլե վերայ կոմսի ան-  
համբերութիւնը աւելանումէր:  
Կորան երեսումէր թէ Խիլդեգար-  
դան պատուհանից է նոյում, իսկ  
Լոյլըուրդան, պատովը ծրվիկ ե-  
ղած Ճանապարհորդներին աւե-  
տիս է տալիս: Այս ասդնը երեա-  
կայութեան խարեւութիւնն էր.  
Վերջապէս Բիչարդը մօտե-  
ցաւ ամրոցին և զարմացած մնաց,  
որ կամուրջը վերցրած էր, պատի-  
վերայ ման էր զալիս զինուորած

պահապանը, և դռներու վերայ  
էլ չէր միտիրում իւր տոհմական  
դրօշը:

Թիշարդն ու Օտտօն միմեանց ահ  
ու դողով նայեցին և չգիտեին ինչ  
մտածեն: Յետոյ մօտեցան դռնե-  
րին ու յայտնեցին, թէ Եղիպտո-  
սից Եկողները պահանջումեն իւ-  
րեանց կալուածքները մտնել. ոչ  
ոք չը բացեց նորանց: Կոքա ա-  
ռաւել խստիւ սկսան պահանջել,  
սպառնալ (грозить). — բոլորը ՚ի  
զուր:

— Այս դաւաճանութիւն ( ազ-  
մինա ) է. կանչեցին Օտտօն ու  
իշխանազնը:

— Այս ասեց Ռիչարդը. Բայց  
մենք չարաչար կը պատժենք ամ-  
րոցի այժմեան իշխողին. Տէր Աւ-  
տուած: Արդեօք ի՞նչ է եղել Խիլ-  
դեգարդաի ու Վայլբուրդաի հետ  
Ռոբերտն, Օտտօն ու Ռիչարդը  
գնացին մօտակայ գիւղը: Այստեղ  
նորանց ասեցին, թէ Այլբերիկն է,  
իշխում այն ամրոցի մէջ Օտտօն  
յանձնարարութեամբը:

— Ի՞նչ են ասում. մտքիս էլ չէ  
եկել նորան յանձնելը, ասեց ջա-  
հիւ կոմսը:

— Բայց կոմսուհի Խիլդեգարդան  
ու Վայլբուրդա աղջիկս ուր են:

— Կորանք, թէ Այլբերիկին կը

Հարցնես, գնացել են կոմս Օտ-  
տօի հետ միասին Եղիպտոս. պա-  
տասխանեց գիւղացին.

— Այս ի՞նչ բաներ եմ լսում.  
Կանչեց Ռիչարդը,

— «Եղն ըռալովին կոմսը գնացիւր  
կալուածառէրների (вассалы) մօտ  
պատմեց ըոլոր անցքը և գրեց նա-  
մակ ամրոցը, սպառնալով, թէ զօ-  
ռով կը խլէ այն ամէն կալուածքը,  
եթէ Այլբերիկը չի համաձայնվի  
վերադարձնել իսկական տիրոջը.  
Բայց Այլբերիկը նորա սպառնա-  
լեաց վերայ սաստիկ ծիծաղելով  
պատասխանեց թէ կոմսի ընտա-  
նիքը ՚ի վաղուց են մեռել.

Կոմսը հաւաքեց կալուածատէրներին, զինւորեց նորանց ու գիշերով ընկաւ ամրոցի վերայ. Մեծ դժուարութեամբ կարողացան պաշարովը (օսаждայութեամբ) առնել այն ամրոցը: Այս փոքրիկ պատերազմի ժամանակ Այլբերիկը սկստից վար ընկաւ հորը և գլուխն ու ոտները կոտրտվելով, աւանդեց հողին:

Սորանից յետոյ Ռիչարդը՝ գերիներին հարցնելով՝ իմացաւ Այլբերիկի անգութ արարքը: Օտտօն վաղեց իւր մայրը ու քոյրը ազատելու:

Վերստին բազգաւորած ընտա-

Նիքի մէկ մէկու տեսութիւնը բռ-  
լոր ներկայ գոտնվողների սիրտը  
շարժեց։ Բիչարդը ոչոք չը պատ-  
ժեց, որովհետեւ Այլբերիկը իւր  
համախոհներից (сообщникъ) մեծ  
մասի հետ սպանվեցան պատե-  
րազմի ժամանակ, իսկ մնացեալքը  
փախան :

Բիչարդը մեծ հանդէսով շնոր-  
հակալութիւն արեց Աստուծոյն,  
որ ինքը ազատութիւն ստացաւ  
գերութիւնից և յաջողութեամբ  
ջարդեց թշնամիքը։ Ընդ նմին նա  
քաշիւց աղքատաց առաձեռն ո-  
ղորմութիւն, պարզեց կալու-  
ծառէրներին և այս անցքի յիշո-

Ղութեան համար հրամայեց, ու  
մէկ սիրուն եկեղեցի շինեն։ Բռ-  
բէլտն էլ Բիչարդի մօտ մնաց,  
որն որ Երջանիկ ապրումէր իւր  
բարի ընտանեաց և ծշմարիտ բա-  
րեկամի հետ։



*L. Klopstock*

**CUBUSORVM**

**BT**

**WILHELM CARL VON**

115 Odeon 3

116 Odeon 4

# ԵԱՏՕՒԲ

ԵՒ

## ՆՈՐԱ ՀՈՒՆՃ

Անտօնի Հայրը թէպէտե աղ-  
նիւ, բայց շատ խեղջ մշակ մարդ  
էր: Կա ոչինչ չ'ուներ աշխարհիս  
երեսին, բայց ՚ի այն գործիքը, ո-  
րով օրական Հայ էր գտնում: Բո-  
լոր իւրունեցած չունեցածը վատ-  
նել էր կնոջ երկարժամանակեայ  
հիւանդութեանը վերայ և վերջն  
էլ վոխանակ չարչարանաց վարձը  
ստանալու, զրկվել էր իւր սիրա-

կան ամուսնից։ Ահա այսքան նեղութեանց մէջ կը մտածէր թէ ինքը աշխարհիս մէջ աւելորդ է և ուրախութեամբ մահ կը ցանկար, բայց յանկարծ միտը կ'ընկնէր իւր Անտօն որդին, որին սիրումէր իւրանից աւելի ու ինքիրան կ'ասէր։ չէ՛, ես ալէտք է ասլըեմ իմ որդւոյս համար։ Անտօնն էր ազնիւ ու խոնարհ ընութեան տէր տղայ և իւր բարի վարքովը սիրելի էր բոլոր ընկերների ու գրացիների աչքումը։

Միանգամ նա անցնումէր մէկ պալատի դրան մօտ։ Ճառայն որ նորան տեսաւ՝ կանչեց ու ասեց։

այ տղայ, ուզումես քսան կռալէկ  
փող աշխատել։ Անտօնը պա-  
տասխանեց. շատ մեծ ուրա-  
խութեամբ, բայց ինչ պէտք է  
անել։

Ծառայն. Մեր շներից մինին  
պէտք է վեր առնես, վզից քար  
կապես ու դետը ձգես։

Անդօն. Իսկ ինչու կամենումէք  
կորցնել նորան, միթէ մարդու  
կծել է։

Ծառայն. Ձէ՞, դու յետոյ պատ-  
ճառը կ'իմանաս։ Այս ասելով նա-  
բռնեց Անտօնի ձեռից, տարաւ նո-  
րան մի ամբարանոց և ցոյց տուեց  
տնկիւնումը մէկ փոքրիկ շունչար-

Դի վերայ, որ երևում թէ միայն  
մի քանի ըռալէ պէտք է ապրի.  
մազը վեր էր եկած և բոլոր մար-  
մինը վէրբերով պատած։

Անոն. Ո՞հ, խեղջ անասոն, ինչ-  
պիսի ցաւալի դրութեան մէջ է:  
Ծոսոյն. Ահա հէնց այդ պատճա-  
ռաւ աղջիկ պարոնս կամենումէ  
կորցնել, որովհետեւ այս տանը  
շատ շներ կան, վախումէ որ նո-  
րանք էլ այդ ցաւի չը յանդիպեն։  
Ահա, եթէ կամենում ես քսան կո-  
պէկը, առ ու խեղդիր։ Ես հա-  
րիւր մանեթով չեմ մօտ գնայ։  
Անոն. Բայց անպատճառ հար-  
կաւոր է որ ես դետը ձգեմ։ կա-

բելի է առողջանայ:

Ծառայն. Աղջիկ պարնի բժիշկն  
ասեց, որ էլ ազատելու ծար չըկայ  
Անդն. Բան չըկայ. Թող փորձեմ,  
Ծառայն. Ինչ կամենաս արա, բայց  
մեզի ազատիք դորանից:  
Անդն. Քսան կոպէկը էլի կ'ըս-  
տանամբ:

Ծառայն. Ա դու փողսիրող ես  
եղել:

Անդն. Ինձ համար չեմ ուղում,  
պարոն, այլ դորան համար. Շռէ  
որ ես փողատէր էի եղել, ինձ ոչ  
ինչ հարկաւոր չէր լինի, բայց ես  
ինքս չեմ կարողանում օրական  
հացս գտնել, դորան որտեղից կե-

• Ըստ քակրեմ, քանի որ հիւանդ է,  
ծռուց. Ուրեմն առ այս քսան  
կոսկելը ու բանը վերջացնենք  
շուտով:

Անտօնը մօտիկցաւ շանը, պա-  
տաժեց յարդի մէջ ու վաղելով  
դուրս եկաւ իւր հօր մօտ զնա-  
լու, որ բաւական հեռու տափումը  
մշակումէր: Ճանապարհին քանի  
մտիկ կըտար յարդին, սիրտը կը  
ճմէր և ինք իրան կ'ասէր. խեղձ  
շուն, դու պէտք է շատ չարչար-  
վես. ախ, ինչպէս ցաւումեմ. թէ  
որ ես կարացել էի քեզ օգնել,  
երջանիկ կը համարէի անձս. բայց  
հաւատա՛ ինձ, քեզ ոչ մի ժամա-

նակ ջուրը չեմ ձգելու,

Նորա առաջի հոգսն այն էր որ  
դեղը անցնելիս վախտուկ հաց առ-  
նէ: Հաց ծախողից խնդրեց որ մի  
փոքր աման տայ: Հացը բրթեց  
ջրումը որ առաւել վախկացնէ  
շան համար կերակուրը: Բայց շո-  
նը հազիւ թէ կարաց հիւթը լզել,  
լեզուի ծայրով:

Հայրը շատ բարկացաւ Անտօնի  
վերայ որ այսօր ուշացել էր, բայց  
երբ բանը հասկացու՝ վաթթվեց  
նորա պարանոցովը ու համբուրեց  
նորա խոնարհ աչքերը, ասելով:  
շատ ապրիս որդի: աշխատի՛ր ոյդ  
լարեկցութեան հոգին մինչև մա-

Հը ունենալու :

Այն տափի մօտ, որտեղ բանում  
էին հայրն ու որդին, մէկ լաւ կա-  
նաչ տեղ կար, Անտօնը վեր ա-  
ռաւ դողդղան շանը, տարաւ այն-  
տեղ և խոտի վերայ հանգստաց-  
րեց որ տաքանայ արևով։ Խեղձի  
հիւանդութիւնը մսի շատ ուտե-  
լիցն էր եղել, ու երբ արևի տա-  
քութեամբ մի փոքր ոյժ ստացաւ,  
կարծես թէ քնից զարթեց ու  
չորս կողմ կանաչ խոտ տեսնելով  
ոկտեց բնական ազդեցմունքով ա-  
ռողջարար խոտ պտուել։ Մի  
քանի ժամից յետոյ Անտօնը թո-  
ղեց իւր բանը, որ գնայ տեսնէ

Թէ ինչպէս է շունը . բայց ինչ  
զարմանքի և ուրախութեան մէջ  
ընկաւ , երբ յետ նայեց ու տեսաւ  
շանը , որ լզումէր նորա շորերը :  
Ահա սյսպէսութը օր ձեռին բըռ-  
նած իւրեան հետ կը տանէր ու կը  
բերէր տափիր՝ կանաչ խոտի վե-  
րայ , մինչեւ որ շունը բոլորովին ա-  
ռողջացաւ : Անտօնն էլ չէր հո-  
գում որ ծառայի տուած փողը ող-  
ջը մսխեց , որովհետեւ հիմա նա  
կարող էր կերակրել նորան այն  
հացով , որով ինքն էր կերակր-  
վում : Եւ որովհետեւ նա իւր շա-  
նը շատ սիրեց , անոնն էլ դրեց  
սիրեկան :

Սիրեկանը օրէց օր գեղեցկանումէր, սպայծառանումէր։ Կորաչքերը որ համարեած թէ, մեռածէին, ոկտան կենդանանալ, ուրախութիւն ցոյց տալ։ Կորամարմնոյ անդամները քնքուշացան, վասիկացան։ Հուտով քոստութիւնն էլ անցաւ, սպիտակ ձիւնի պէս մազերը դուրս եկան ու բռլոր իւրեանց շքեղութիւնը ստացան։

Բայց որովհետեւ ամէնին յայտնի էր, թէ Սիրեկանը կը սկսուի այն պալատի տիկնոջը, շուտով նորա ականջին հասաւ այս անակնունելի բանը։ Տիկինն ուզարկեց

Անտօնի մօտ ծառային, որ Երկու  
ոռւթիով առնել այն շունը. բայց  
Անտօնը սկատասխանից. ձեր Աղ-  
ջիկ պարոնը կրկին կը հրամայէ  
գետը ձգել Սիրեկանիս թէ որ  
հիւանդանոյ, բայց ես չեմ էլ հե-  
ռանոյ նորանից: Ի՞նչ փող պէտք-  
է հաւասարվի այն ուրախութե-  
ռւ ընկերութեան, որն որ սա ինձ  
անումէ: Մենք մէկմէկից չենք կա-  
րող հեռանալ: Անտօնը այս բանը  
սուտ չէր ասում, եթէ որ նորան  
մեծ դանձ էին տուել, նա իւր շան  
հետ չէր փոխի: Սիրեկանը նոյն-  
պէս երբէք նորանից չէր հեռա-  
նում կամ հեռացած ժամանակ

ԵՐԲ ԿՐՊԱՐ, յառաջ դէմ կ'եր-  
թար հազար ու մէկ շարժմուքներ  
անելով։ ԵՐԲ ԱՆՏՈՆԸ մի վայր-  
կեան կը թողնէր իւր բահը ու  
կ'երթար մի հովանաւոր ծառի  
տակ հացուտելու, մէկն շանտուա-  
ծին սլէո Սիրականը չորս ոտի  
վերայ թռչելով կը վաղէր տիրոջ  
մօտ, երկու ոտի վերայ կը կանդ-  
նէր, ուրախութիւնից սլոչը կը  
շարժէր ու ԱՆՏՈՆԻ բերանից ա-  
մէն մէկ թիրայի կէսը կ'առնէր։  
Եւ ԱՆՏՈՆԸ թէսլէտ շատ սլակա-  
սութիւն էր կրում, բայց Սիրե-  
կանը նորա բոլոր տիսրութիւնը  
ոչնչացնումէր, փարատումէր իւր

գգուանքով։

Բայց այս ժամանակին, մեծ դըմ-  
բաղդութիւն էր պատահելու։  
Աշնան վերջը Անտոնը չափազանց  
հիւանդացաւ։ Հայրն իւր որդւոյ  
համար վերջին փողը զոհեց, որ  
գեղ առնէ։ ուրիշ կողմից էլ յոյս  
չունելով, մեծ տիսրութեամբ ու  
նեղութեամբ էր պատած։

Յանկարծ միտն եկաւ որ այն  
պալատի տիկինը կամենումէր եր-  
կու ռուբլիով առնել շունը։ այս-  
պիսի դժուար դրութեան մէջ, նո-  
րա համար երկու ռուբլին երկու  
միլիոնի հետ հաւասար էր։

Կամեցաւ այս միտքը առաջար-

կեւ իւր որդւոյն. բայց ասածին,  
սլեւ, նա շատ աշխարեց, որովհետ-  
ուել Անտօնիք՝ ոչ, ոչ. Երբեք, եր-  
բեք, ասելով, դողից սկսեց ատամ  
ներ կը ճանել, սառը քրտինքը ճա-  
կատից թափել:

Ահա արդեն հիւանդութիւնը  
օրեցօր աւելանումէր, բայց ի ջեր-  
մը, վորն ու կողքը սաստիկ ցաւել  
սկսան. աւելի և աւելի իւր մահ-  
ճակալի վերաց շուռ ու մոռռ էր  
դալիս, նեղանում. Այս ժամանակ  
շունը կը գար կողքին կը նստեր  
ու մէկ այնպիսի ցաւալի դէմքով  
մտիկ կըտար իւր ազատողին, որ  
կը կարծէիր թէ ուզում է ասել.

ախ, իմ սիրելի տէր, ինչպէս  
մեղքս ես գալի: Եթէ ցաւը վոքը  
ինչ կը հանդարտվէր, Անտօնը՝  
դառնալով դէպ ՚ի իւր շունը՝ կա-  
սէր. ոչ, իմ վոքը իկ Սիրեկանս,  
ես .քեզ ազատեցի մահից, բայց  
դու չես կարողանում ինձ օդնու-  
թիւն հասցնել. սցմի պէտք է...  
ես... շուտով .քեզ... նից հեռու-  
նամ. ու այս ասելու ժամանակ աղի  
արտասուք կը թափէր շան թշե-  
րու վերայ:

Այնտեղ մօտիկ մէկ մեծասուն  
ու սրտացաւ մարդ կար, Օրֆէիլ  
անունով, որ լսելով Անտօնի հի-  
ւանդութիւնն ու նորա հօր դառն

վիճակի մէջ լինելը, եկաւ նորանց  
մօտ օգնութիւն տալու։ Երբ այս  
պարոնը ներս մտաւ, Անտօնը շատ  
նեղացած էր, իսկ հայրը կողքին  
կանգնած, մեծ տիրութեան մէջ,  
խեղճը էլ չէր մտածում իւր.քաղ-  
ցածութեան վերայ. տեսնելով  
որդւոյն այն դրութեան մէջ, բռ-  
լոր նեղութիւնը մոռացել էր։  
Ամէն կողմից, ամէն կերպով աշ-  
խատումէր որդւոյ չարչարանքը  
թեթևացնելու իւր հայրական փա-  
ղաքշանքով. իսկ շունը մի և նոյն  
ժամանակ, երկու թաթերը մահ-  
ճակալի վերայ դրած, աղիոզորմ  
հայներ էր հանում և զանազան

շարժմունքներով աշխատումէր  
իւր ազատողի ու շք ու մլաքը դէպ  
՚ի ինքը դարձնելու :

Այս սրտաշարժ տեսարանին եր-  
կար ժամանակ Օրֆէիլը նսյումէր  
անշարժ քարի նման։ Եւ յետոյ  
այս դրութիւնից դուրս եկած, մօտ  
գնաց։ Առդէն անկողինի մօտ էր որ  
դեռ խեղձերը նորան չը նկատեցին,  
մինչև շունը իւր հաչելով, չիմաց-  
րեց նորա դալը։ Հայրն ու որդին  
երբ այս անակնունելի այցելու-  
թիւնով զարմացած դարձուցին  
իւրեանց աչքերը, տեսան որ Օր-  
ֆէիլի աչքերն էլ արտուսուքով  
լցուել էին։ Ո՞հ, ի՞մ սիրելի բա-

բեկամներս, ասեց մեծատունը,  
ի՞նչ ցաւալի դրութեան մէջ եմ  
ձեզ տեսնում: Յետոյ դառնալով  
դէպ ՚ի հայրը: Ինձ ասեցին թէ  
դու էլ այնքան փող չունես որ օդ-  
նես որդւոյդ:

Հայրը: — Մինչև մէկալ օրը ես  
կարողացել եի որդւոյս կերակրել,  
հիմա երկու օր է որ ոչինչ չենք  
կերել, մեր բոլոր յայսը մնումէ այս  
մահճակալի վերայ, որն որ կամե-  
նում եմ ծախել:

Աշտօնը այս խօսքերի հետ դար-  
ձաւ դէպ ՚ի իւր Սիրեկանը, ձեռը  
մեկնեց ու ախ քաշեց: որով կա-  
մենումը իմաց անել, թէ ողս

խեղճ կենդանիս էլ .քաղցած է :

Պարոն Օրֆեիլը մէկ կողմից  
ցաւակից եղած նորանց խեղճ  
դրութեանը, միւս կողմից զարմա-  
ցած Անտօնի դէպ ՚ի իւր շունը  
ունեցած սիրոյ վերայ, ասեց, մի՛  
նեղանար, սիրելի որդիս, երեքիդ  
էլ կ'օդնեմ : Ահա այս խրճիթը  
շատ խոնաւ է, փոխանակ առող-  
ջանալու, այս տեղ կարելի է հի-  
ւանդանալ : Ես ուրախութեամբ  
կ'ընդունեմ քեզ իմ տունս և փո-  
քըր ժամանակուայ մէջ առողջաց-  
նել կը տամ : Խօսքը վերջացնե-  
լով դուրս գնաց : Մին քանի ըո-  
սկէից յետոյ երկու ծառայ եկան,

պատատեցին հիւանդին ու տա-  
րան Օրֆեիլի տուն։ Ճանապար-  
հին քանի որ Անտօնը ծածկոցը  
կը բանար, կը տեսնէր որ աջ կող-  
մից հայրը, իսկ ձախ կողմից Սի-  
րականը պոչը .քաշ արած, գլուխը  
դէալ ՚ի գետինը թեքած դնում  
են։ Վերջապէս հասին տունը,  
ուր արդէն հիւանդի համար սե-  
նեակ պատրաստած էր։ Ըուտով  
բժիշկը եկաւ ու հարկաւոր դեղե-  
րը բերել տուաւ։ Տասնուհինդ  
օր համարեան նորանից չը հեռա-  
ցաւ ու ողջ օրը կանդնած էր նո-  
րա ցաւը ու նեղութիւնը թեթե-  
ւացնելու և այս ժամանակուայ մի-

ջոցում, Անտօնը ամենելին առողջացաւ:

Հենց առողջացաւ թէ չէ նա վազեց իւր հօր մօտ աւետիս տալու: Հայրը փաթթվեց որդւոյ շինքովը և ոլաչպչելով օրհնումէր Այն ու իւրեանց բարերարին:

Մի և նոյն ժամանակ Անտօնը մտածումէր թէ ի՞նչ անէ որ իւր բարերարին երախտագիտութիւն ցոյց տայ, ի՞նչ անէ որ նորան հաւանեցնէ, 'ի զուր գիշերը վաղ մտաւ տեղը, 'ի զուր աշխատեց քնել, չէ, աչքին քուն չէր գալիս: Այսպէս մինչեւի լոյսը չարչարանքով անցոյց: Առաւօտը ինչպէս

լուսացաւ, դուրս եկաւ տունից ու  
գնաց Օրֆեիլի մօտ։ Երբոր դռնե-  
րից դուրս գնաց, կանչեց շանը ու  
լազրէլով ասեց։ Այս, իմ Սիրա-  
կանս, դու հիմա ինձ առողջ տես-  
նելով, ուրախանումես, բոյց ի՞նչ  
գիտես թէ, մի քանի րոպէից յե-  
տոյ ինչպիսի տիսրութեան մէջ  
ալէտք է լինենք երկուսս էլ։ Ի՞նչ  
գիտես թէ, մի քանի րոպէից յե-  
տոյ, մենք չը ալէտք է մէկ մէկից  
հեռացած, բաժնած լինենք։ Հայ,  
Սիրեկանս, հայ, իմ ընկերս, մենք  
ալէտք է բաժնվենք շուտով։ Այս  
ասելով գնաց Օրֆեիլի տունը ու  
ոկտեց դուռը բաղիսել (ծեծել),

՚իրոք դողալով, Դոները բացվեցան ու Անտօնիը տեսաւ իւր բարերարին աթոռի վերայ նստած։  
Մօտիկցաւ նորան շունը գրկած,  
ընկաւ նորա ոտները ու ձեռը համ  
բուրելով, ասեց. դուք ինձ մահ  
հից ազատեցիք, դուք ինձ կեանք  
պարզեցիք ու Երջանկութիւն  
տուիք. իսկ ես մի խեղճ տղայ, ոչ  
ինչ չունեմ, բայ ՚ի այս շանից,  
որին սիրումեմ ինչպէս իմ եղբօրը,  
ահա այս եմ ձեզ ընծայում.  
Օրֆէիլը այս ազնիւ զգացմանը  
հաւան կացած, պատասխանեց.  
սիրելի որդիս, քեզ մի անգամ Երջանկացրի մահից ազատելով, դու

արժանի ես Երկրորդ Երջանկութեան, որ ես քեզ կամենումեմ տալ կեանքդ ապահովելով։ Ահա, իմ տունս տեղս, ունեցած չունեցածս բոլորը քեզ եմ նուիրում։

Եւ Ճշմարիտ էլ որ Անտօնին ունորա հօրը ընդունեց իւր տուն և հօր վախճանվելից յետոյ, որդւոյն որդեգիր շինեց։ Անտօնն իւր բնական զգացմունքները ուսումնով էլ կրթելով՝ շատ երևելի մարդ եղաւ։ Պէտք է ասած որ նա օրեցօր աւելի և աւելի սիրեց իւր շունը ու երբեմն դդուելով կասէր նորան։ Թէպէտ ես քեզ ազատեցի մահից, բայց հիմակրայ բոլոր

ԵՐՃԱՆԿՈՒԹԻւՆՆ ԷԼ ՔԵՂԱՆՈՎ ԵՄ  
ՃԱՐԵԼ. Այն գԵՂՈՒՄԸ, ոՐՄԵՂ որ  
այս պատահեցաւ առածք էր դար-  
ձԵԼ. ԵՐԲ կամենումէին ասԵԼ թէ  
այս երկու ընկերները կամ բարե-  
կամները խիստ սաստիկ սիրումեն  
միմեանց, կասէին. Նորանք Անտօն  
ու Սիրականը են :

468



ՑԱՆԿԻ

ՄԱՏԱՆԻ

Խ.	Օստոի ջահիլութիւնը	7:
Բ.	Յաջողակ դէսլք	19:
Դ.	Խաշակրաց ուղեօրութիւն	28:
Ե.	Որդւոյ հեռանալք	34:
Ի.	Կենդութիւն.	45:
Զ.	Օստօն համումէ Եպիսկոպոս.	53:
Է.	Անապատի մեջ խոսակցութիւն	61:
Ը.	Անապատ.	73:
Ժ.	Երջանիկ հայր	82:
Ճ.	Եւրոպայ դառնալք	95:
	ԱՆՏՕՆ ԵՒ ԻՒՐ ՇՈՒՆԻ.	107:

— ԾՈՅՑԾՈՅՑ —

Almudena 722 A 221.p

գ. ԲՆՆ Ե 25 ՀՊԸ. արթավ.





